





# ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ


ԴՊՐԱՆՈՑԻ

75-ամեակը



Շ Ա Խ Շ Խ

Տպարան Բ. Տէր-Սահակեանի  
1913





# 20

Արցախի Հայոց Հոգեոր Թեմական

Դպրանոցի 75 ամեակի առթիւ.

Որպէս սլալծառ մի վառ դամբար

Սիրոյ աստղ դու դարտւոր.

Լուսաւորես միտք մեր խաւար

Հայրենեաց պսակ դու փառաւոր:

Նման լուսնոյ դողդող շողին

Լոյս ես տալիս, լոյս գիտութեան

Քո սիրասուն զաւակներին

Դու լոյս կենաց ողջ հալութեան:

Հայ ժողովուրդ, Հայ մանուկներ,

Թէ աստ մօտիկ հեռու վայրեր,

Եկալք տօնենք տօն ցնծութեան

Դպրանոցիս պերճ լորելեան:

Երգենք ի մի քաղցը երգեր

Կեցցէ դպրոց, կացցէ դպրոց.

Կանգուն մնալ երկար դարեր

Լոյս տալ լաւէտ տանս Հայոց:

Գարդիէլ Ղուլիսնիսեան

# Ա Ռ Չ

Պատմական Արցախի կամ Ղարաբաղի միակ  
միջնակարգ կրթական հաստատութիւն Հալոց Թե-  
մական Դպրանոցը հիմնուել է արքեպիսկոպոս  
Բաղդասար մետրօպոլիտի ջանքերով 1838 թուին:  
Հենց սկզբնական շրջանից՝ գլխաւորապէս նիւթա-  
կան և մի քանի առ աննպաստ պայմանների  
շնորհիւ, յաճախակի ենթարկուել է փակման—  
մինչև դպրանոցի վերջնական վերակազմութեան  
տարին այն է՝ մինչև Տ. Տ. Մատթէոս Ա. Կա-  
թողիկոսի սրբատառ կոնդակներով կանոնադրու-  
թիւն և հոգաբարձութիւն հաստատելը:

Ինչպէս նախնական շրջանում, նոյնպէս և  
վերակազմութիւնից յետով, տեղական կեանքի  
պայմանները չափաւոր լինելով՝ դպրանոցի գոյու-  
թիւնը հնարաւոր է եղել քիչ գումարով, այն է՝  
4, 5, 6 հազարով պահպանել. իսկ 1890 թ.  
Երդ և Զ-րդ դասարաններ աւելանալուց յետով  
նախահաշիւններից երեսում է, որ ժամանակի և  
կրթական գործի անհրաժեշտ և անխուսափելի  
պահանջների պատճառով դպրանոցի մինիմալ  
նախահաշիւն հասել է 15—16 և 18 հազարի.  
իսկ թէ հոգաբարձութիւնը ինչ չարքաշ և ան-  
պատշաճ միջոցներով է հայթհայթել ու հայթհայ-

թում վերոլիշեալ գումարի մեծագոլն մտսը (7-հա-  
զարը Պարաբաղի Հալոց վիճ. կոնսիստր. է վճարել և  
վճարում Ամենալն Հալոց Վեհ. Հալրապետի բարձ-  
րագոյն հաճութեամբ ու Ս. Սինօդի կարգա-  
գրութեամբ) այդ մասին լալտնի է ամենքին:  
Ամեն տարի հոգաբարձութիւնը կամ նրա ներկա-  
յացուցիչը աղքատութեան ցուալը ձեռքին շրջել է  
քաղաքէ քաղաք, դունէ դուռն և մուրալով մի  
կերպ պահպանել է Թեմական գպրանոցի գոյու-  
թիւնը. հետեանքն էլ կրթական և գաստիարակ-  
չական տեսակէտից միխթարական չէր կարող  
լինել և չէ, որովհետեւ մեծապէս նիւթականի  
պատճառով գպրանոցը զրկուած է եղել կարող  
ոյժերից, ստեղծագործող և գաստիարակութեան  
գործին նուիրուած անհատներից (բացառութիւները  
լարգելի են). ուստի և անկարող է եղել կանգնել  
իւր բարձր կոչման վրայ և տալ հասարակու-  
թեան, ազգին և եկեղեցուն աւելի պատրաստի  
և այխտանի անգամներ: Նոյն պատկառելի հաս-  
տատութիւնն այսօր ևս չի կարողանում կատարել  
իւր խոշոր գերը, որովհետեւ ամբողջ 75 տարի  
չարքաշութեամբ գոյութիւն պահպանող կրթական  
հաստատութիւնը տակաւին գտնւում է անապա-  
հով, աննախանձելի և մոռացուած վիճակում...:  
Ահա այս լուզիչ և վրդովեցուցիչ հանգամանքը և  
ուսման ու կրթական գործի բարելաւման անվի-  
ճելի պահանջն է, որ ստիպել է հոգաբարձու-  
թեանը հրապարակի վրայ դնել Թեմական գպրա-

նոցի 75 ամեալ յօրելեանի խնդիրը, նպատակ ու-  
նենալով Նորին Սուրբ Օծութեան ազգիս Վեհա-  
փառ Հայրապետի Բարձրագոյն Հովանաւորու-  
թեամբ — (Ներկալ Վեհափառ Հայրապետը 1875/76  
ուսումնական տարում եղել է վերատեսուչ Թե-  
մական գպրանոցի) մեր Հայրենակիցներից կրթա-  
կան գործն ապահովելու գիտակցութիւնն ունեցող  
անձանց կարեկցութեամբ և աջակցութեամբ ապա-  
հովել մեր Հայրենիքի ամենակարեսոր թանկագին  
կրթարանը: Գումարած գրամներն անձեռնմխելի  
կը մնան, կը գործադրուի միայն 0/0-ը: Ոիրելի  
Հայրենակիցներ, մի խելօք Հասարակական գործիչ  
ասում է իւր Հայրենակիցներին — Զեր ընտանե-  
կան, Հասարակական և ազգացին կետնքի բարե-  
լաւութիւնն ու յառաջադիմութիւնը մեծապէս,  
եթէ ոչ ամբողջովին, կախուած է ձեր և ձեր զա-  
ւակների կրթութիւնից: Այս խօսքերը նոր չեն  
տառածած. քաղաքակիրթ մարդկութիւնը վազուց է  
խոստովանել նորա անհերքելի ճշմարտութիւնը,  
բայց գժբազմաբար ցայսօր էլ շատ քչերն են  
անկեղծօրէն և լրջութեամբ մօտեցել ալդ խնդրին.  
տեղը չէ ալստեղ լիշտատկել այն բոլոր չարիքներն  
ու թշուառութիւնները, որ շնորհիւ տգիտու-  
թեան կարծէք թէ ճակատագիր են գարձել խեղճ  
հալ ժողովրդի համար. բայց քաղցը պարտակա-  
նութիւն ենք զգում լիշտեցնել քեզ — խաւարի և  
տգիտութեան մատնուած շինական եղբայր, Հայ-  
րենի հողից և ջրից զրկուած ունեսոր ու վաճա-

ուական, դալկացած ու մրօտուած աշխատաւոր,  
քրտնաթոր մշակ ու տրհեստաւոր, որ դու թեա-  
կոխել ես պատմական այնպիսի մի շըջան, որ այլ  
ես նահապետական հասկացողութեամբ ու կեան-  
քով ապրել չես կարող, որովհետեւ քո ընտանե-  
կան, հասարակական և ազգային կեանքի պահպա-  
նութեան համար ժամանակն այլ բան՝ մտքի,  
հասկացողութեան, տնտեսական պայմանների,  
նիստ ու կացի, բարեփոխութիւն է՝ պահանջում.  
ինչպէս այսօրուայ քաղաքակիրթ ազգերի, այնպէս  
էլ քեզ համար այդ բարեփոխութիւնը հնարաւոր  
կը գառնայ ուսման — կրթութեան միջոցով։ Իրո-  
նութիւնները, տանջանքը, սովն ու սրածու-  
թիւնն ու զուլումը այնքան էլ սարսափելի չեն  
եղել քեզ համար պատմական անցեալում և  
չեն լինի ապագայում, որովհետեւ գրանք ժամանա-  
կաւոր ցաւեր են... փոթորիկ և կարկուտ բերող  
ամպերի պէս կուգան ու կերթան. — բայց տր-  
գիտութիւնը, ոչ այդ սարսափելի և զարհութելի  
հրէշն է մարդկութեան ամենամեծ թշնամին իւր  
տեական և մահացուցիչ հետեանքներով։ չկալ  
աշխարհիս երեսին ժողովուրդ, ազգ, թագաւորու-  
թիւն, որ առանց ուսման և կրթութեան տնտե-  
սապէս բարձրացած լինի, որքան էլ որ այդ երկիրն  
օժտուած լինի բնական հարստութիւններով...  
այն ժողովուրդը, ազգն ու պետութիւնը, որ ուս-  
ման և կրթութեան համար ոչինչ չի խնայում,  
այնտեղ էլ սկսում է տնտեսական կեանքի արագ

զարգացումն ու ապահովութիւնը. այս երկու ան-  
հրաժեշտութիւնները, այն է՝ դպրոցն ու տնտե-  
սական զարգացումն այնքան են սերտ կապուած  
իրար հետ, որ մէկն առանց միւսի անհասկանալի  
է:

Այս համոզումը և այն անմիջիթար գրու-  
թիւնը, որին ենթարկուած է ամբողջ 75 տարի  
մեր պապերից մեզ աւանդ մնացած՝ մեր հայրե-  
նիքի միակ միջնակարգ կրթական Թեմական դպր-  
րանոցը, չի կարող չ'ցնցել ուսման անփիճելի գերա-  
գոլն նշանակութիւնը հասկացող ամեն մի սրտա-  
ցաւ ու հայրենասէր, ևս առաւել Պարաբաղի օդն  
ու ջուրը շնչած ու խմած հայրենակցի սիրտ և  
Շհրաժարեցնել իւր անհատական շահերից ու մեր  
պապերի ու հայրենիքի պատուի համար հանդէս  
բերել իւր ոլժելը—կամաւոր նուիրաբերութիւնը—  
հայրենեաց փառք 75 ամեալ Թեմական դպրանոցի  
ապահովութեան համար:

Այս համոզմունքն է ահա, որ ամենքիս այս-  
քան թշուառութեան, աղէտի, խաւարի, վշտի և  
տառապանքի օրերում ուրախութիւն է պատճա-  
ռում և բարի ու գեղեցիկ օրերի լոյս ներշնչում...  
Այդ լոյսն է, որ կեանքի ծովի ալիքներին  
մատնուած հայրենի նաւակին ղեկավար է հանդի-  
սանում, այդ լոյսն է, որ մեզ հաւատ է ներշն-  
չում, թէ ամենքս էլ իրեւ մեր կարօտ հայրե-  
նիքի հարազատ և սրտացաւ զաւակներ, կը կեն-  
դանացնենք և կը վառենք մեր երջանիկ նախ-

նիքների սուրբ և պալծառ Հոգին և կտրդարաց-  
նենք այն լուսը, որով ապրել են մեր պապերը. և  
վերջապէս այդ լուսը, հաւատն ու սէրն է, որ  
այսօր մեզ բարձրաձայն կանչել է տալիս, հայ եղ-  
բայրներ ու քոյլեր, հայ ունեոր ու գիտուն, հայ  
մշակ և աշխատաւոր, հայ վաճառական և արհես-  
տաւոր, հայ ուսուցիչ և երիտասարդ, որք ի որ-  
փիւոս աշխարհի, այս պատմական ըոպէին դու  
արձագանք պիտի տաս քո նիւթական և բարոյտ-  
կան աջակցութեամբ, որովհետեւ մեր հարազատ  
միակ կրթական հաստատութեան լինել չլինելու  
հարցն է վճռւում:

---

Դարարադի Հայոց Թեմական Հոգեւոր  
Դպրանոցի Հոգաբարձորին եւ 75 ամեայ  
Յօրելենական Կետրոնական Յանձնաժողով:

Համառօտ աեղեկագիր Ղարաբաղի  
Հայոց Հոգիոր Թեմական Գպրանոցի  
75-ամեայ գոյութեան. \*)

19

ԺԹ-ըդ գարու ոռւսահայերի մտաւոք վերածը-  
նութեան սկիզբը կապուած է հայերի մահմեդա-  
կան լծից ազատւելու և քրիստոնեալ ոռւս պե-  
տութեան իշխանութեան տակ մտնելու պատմա-  
կան նշանակալից գէպքերի հետ։ Ոռւս կառավա-  
րութիւնը հենց սկզբից բարեացակամ վերտըեր-  
մունք ցոյց տալով հայ ժողովրդին, աշխատեց  
կուտուրայի և յառաջադիմութեան նախանձա-  
խնդիր և ընդունակ այդ ազգին յարմարութիւններ  
տալ քաղաքակրթութեան ուղին բռնելու, գիտու-  
թեանը հազորդակից լինելու։ Հայ ժողովրդի  
ամբողջութիւնը ներկայացնող միակ իրաւական  
մարմինը ճանաչելով հայ եկեղեցուն, ոռւս կառա-  
վարութիւնը յատուկ կանոնադրութիւն տուեց  
եկեղեցուն Պօլօժէնիա անունով։ Ալդ նոյն կանո-  
նադրութեան մէջ օրէնքով որոշուած է ոռւսահայ

\*) Գպրանոցի 75-ամեայ մանրամասն պատմութիւնը գրում է Ակօն և  
պատրաստ կըլինի օգոստոսին։

վեց թեմերից իւրաքանչիւրում բանալ Թեմական  
Հոգեւոր Գոլրանոց հալ եկեղեցու համար կրթուած  
պաշտօնեաներ պատրաստելու և հալ ժողովրդի  
մտաւորը բարձրացնելու:

Պոլոժէնիալի հաստատութեան թւից՝ 1836-ից  
Եջմիածնի լուսաւորչական հայոց ս. Սինոգը կար-  
գագրում է ժամանակի թեմակալ առաջնորդներին  
անթերի կատարել օրէնքի պահանջը և բանալ  
առաջնորդանիստ քաղաքներում Թեմական գոլրա-  
նոցներ: Այս նոյն ժամանակներում բացւում է  
և Ղարաբաղի թեմի Շուշի առաջնորդանիստ քա-  
ղաքում Ղարաբաղի Հոգեւոր Թեմական Գոլրանոցը,  
որի 75-ամեալ լոբելեանը կատարւելու է այս տա-  
րուայ օգոստոս ամսին. ուստի կարեոր է համա-  
ռու գծերով վազօրօք ծանօթանալ ալդ կրթական  
հաստատութեան պատմութեան հետ:

Ղարաբաղի թեմի ժամանակի առաջնորդն էր  
Բաղդասար մետրօպօլիտ Հասան Զալալեանցը\*) որն  
առաջ նստում էր Գանձասարի վանքում, իսկ  
Պոլոժէնիալի հաստատութիւնից լետոյ տեղափոխ-  
ւում է Շուշի, իրքե Ղարաբաղի թեմի առաջնորդ:  
1837 թւին Բաղդասար մետրօպօլիտը գնում է  
ս. Եջմիածին օրէնքով նշանակուած երդումը տա-  
լու, որ պաշտօնի մտնի. ալդ ժամանակ էլ առ-  
նում է հետը Երևանում արդէն բացուած Թեմա-

\*) Մետրօպօլոսութեան աստիճանը ստացել էր Եփրեմ կաթողիկոսից,  
որ հաստատել էր նաև յաջորդ Յովհաննէս Կալբեցի կաթողիկոսը:

կան դպրանոցի «շտատը», ալսինքն դպրանոցի դասատուների ոռճիկների ցուցակը և վերագառնում է: 1837 թւին նոյեմ. 4-ին բացւում է կոնսիստորիան և առաջնորդն անմիջապէս հոգ է տանում Շուշում բանալ դպրանոց: 1838 թւին բացւում է դպրանոցը. կոնսիստորիան նոյն թւի յունիսի 29-ին գիմում է ս. Էջմիածնի Սինոդին, որ հաստատէ նորաբաց Թեմական դպրանոցի շտատը, որ հետևեալն է՝ Հոգեոր Ճեմարանի<sup>\*)</sup> կտուավարիչ և վերին դասարանի Ռուսաց լեզուի ուսուցչին 450 ռ. Հայոց լեզուի ուսուցչին 300 ռ. սլամութեան, աշխարհագրութեան, թուաբանութեան ուսուցչին 330 ռ. պատրաստական դասարանի Ռուսաց լեզ. դասատուին 200 ռ. Հայոց լեզ. ուսուց. 200 ռ. Ճեմարանի առօրեալ ծախք 180 ռ. ընդամենը 1860 ռ. Սինոդը հոկտ. 8-ի գրութեամբ հաստատում է ալդ շտատը:

Մետրոպոլիտն ալնուհետեւ նոյեմբ. 9-ին օրհնութեան թուղթ է ուղարկում թեմի 6 շրջանների՝ Դիզակի, Վարսնդալի, Խաչենի, Զրաբերդի, Իկիրմիդորդի և Բարդաբասանի հայ ժողովրդին, որ կամաւոր նուիրատւութեամբ օգնեն հոգեոր ատեանին և հոգեոր Ճեմարանին, ուր սովորում են Պարագազի թեմի հոգեորականների երեխաները, որտեղ պէտքէ ազգերի և լեզուների գիտութիւն

<sup>\*)</sup> Եյդ ժամանակները թեմական դպրանոցը կոչւում էր նաև Հոգեոր Ճեմարան:

ձեռք բերեն և աւարտելուց լետով ժողովրդի ճշշ-  
մարիտ, իմաստուն հօվիւներ գառնան: Թէ հոգեսոր  
ատեանը և թէ գպրանոցը զուրկ էր եկամուտնե-  
րից, ուստի մետրօպօլիտը յաճախակի դիմումներ է  
անում մի կողմից ժողովրդին, միւս կողմից Վեհա-  
փառ կաթողիկոսին և Սինոդին օգնելու: Սինոդին  
ուղղած մի գրութեան մէջ մետրօպօլիտը յայտնում  
է, որ ժողովուրդը սիրով նուէրներ չի տալի, առար-  
կելով, որ գպրանոցում սովորում են միայն հոգեսորա-  
կանների զաւակները, իսկ աշխարհականներինը՝ ոչ:  
Սինոդը 1838 թ. գեկտ. 17-ին թուլ է տալի, երբ տեղ  
լինի, գպրանոցում ընդունել նաև աշխարհականների  
որդոցը: Դպրանոցի առաջին ուսուցիչներն են եղել  
Գաբրիէլ աւագ սարկաւագ Տէր Աւագեան, թուրքաց  
և պարսից լեզուների համար մոլլա Ալլահվերդի, ո-  
րին հետևեալ տարին փոխարինել է հայազգի միրզա  
Ֆարրուխ Ամիրխանեան: 1841 թւին Դպրանոցի  
գիրեկտօր եղել է Գաբրիէլ Մամիկոնեան: Ուսում-  
նարանը սեփական շէնք չունենալու պատճառով  
վարձովի շէնքում է տեղաւորուած եղել. տարեկան  
վարձն եղել է 100 ռ.: Նիւթականի սղութեան  
պատճառով 1843 թ. գպրանոցն առժամանակ փակ-  
ւում է. մարտի 1-ից 1844 թ. մինչև 1845 թ.  
յուլիսի 16 - ը չնայելով, որ գպրանոցն ու-  
նեցել է միայն 4 ուսուցիչ, տարեկան 120-100 ռ.  
ոսճիկներով, որոնցից էլ ոմանք ձրի են ծառալել  
1—2 տարի: 1845 թւին մետրօպօլիտը կրկին ժո-  
ղովրդի օգնութեանն է դիմում և գպրանոցը բաց-

ւում է: Գպրանոցը տեղաւորելու համար քաղաքացիներից մէկը ձրի 6 ամսով իր տունն է տալի. քաղաքի պետական գպրանոցի տեսուչ Խիտրովը յանձն է տոնում ձրի վարել գպրանոցի տեսչութեան պաշտօնը և տւանդել Ոռւսաց լեզու, պատմութիւն և աշխարհագրութիւն, նոյնպէս ձրի:

Գպրանոցի յետագայ կեանքի մասին մինչև 1860 թիւը լրիւ տեղեկութիւններ չկան, երեսումէ որ ունեցել է 2 գտարան. եզել է առաջնորդի և կոնսիստորեալի անմիջական հսկողութեան տակ. պահւել է թեմական եկամուտներով ու ժողովրդի նուէրներով. այսպէս շարունակումէ մինչև որ Մատթէոս կաթողիկոսը յատուկ կոնդակով գըպրանոցի համար հաստատում է առանձին հոգաբարձութիւն:

1859 թւին Եռւշու հայ հասարակութիւնը պատգամաւոր է ուղարկում Համբարձում աղա Հախումեանին խնդրելու կաթողիկոսին, որ հոգաբարձութիւն նշանակէ: Վեհափառը ժողովրդի խնդիրը լարգում է և 4-ն դեկտ. 1859 թ. № 284 կոնդակով, գովելով ժողովրդի ցանկութիւնը, պատուիրում է ընտրել 4 վկալուած և ուսումնասէր մարկդանց, որոնք պէտք է մշակեն Տփիսիսի ներսիսեան գպրանոցի հոգաբարձութեան կանոնագրութեան նման մի կանոնադրութիւն, ուղարկեն իրեն, որ այդ Սինոդի հետ խորհրդածութեան առնելով՝ հաստատէ և ասլա ուղարկէ գործադրութեան: Կազմում է այդ կանոնագրութիւնը

,,Յօդուածք նախասահմանական կանոնաց վասն ներքին և արտաքին կառավարութեան Հոգաբարձութեան Հ. Դ. Ղարաբաղու<sup>ւ</sup> 20 յօդուածներից բաղկացած։ Վեհափառը հաստատում է այդ կանոնագրութիւնը, որը և ժամանակաւորապէս գործադրում է։

1860 թ. յունվարի 24-ին Դանիէլ Վ. Շահնազարեանի կազմուած ժողովում Շուշում ընտրում են 5 Հոգաբարձուններ, որոնք են՝ 1) Արքահամբէկ Մագաթեան, 2) Համբարձում աղա Հախումեան, 3) Արքահամ Խանդամիրեան, 4) Սարգիս Մագաթեան և 5) Նուշի քաղաքացի Յովհաննէս Ելչիբէկեան. ընտրում են նաև 5 անձնափոխանորդներ։ Ապա 2 հոգու՝ Բաբո Բէկլարեանին և Գէորգ Ամիրխաննեանին ուղարկում են կաթողիկոսի մօտ խնդրելու, որ գալրանոցի եկամուտների աղբիւրները աւելացնէ։ Վեհափառը յարգում է այդ խնդիրը, աւելացնում է եղածի վրայ նաև՝ սրբագրամ արդիւնք և ամբողջ թեմի մոմավաճառութեան կրպակի արդիւնքը, որը Հոգաբարձութեան մշտնջենական տեսչութեանն է յանձնւում։ 1860 թ. յունիսի 15-ին Մատթէոս կաթողիկոսը № 322 կոնդակով հաստատում է նորընտիր Հոգաբարձութեան անդամներին, պատուիրելով, որ գլուխանոցի տարեկան ել և մտքի մասին ամեն տարի հաշիւ ներկայացնեն Հոգեւոր տտեանին։ Պալրանոցի ել և մտից հաշիւներից երեսում է, որ 1860—1865 թ. գլուխանոցի եկամուտների աղբիւրներն եղել են՝

- 1) մոմավաճառութեան տրդիւնք.
- 2) Հոգեոր տեսչութեան տուած ծննդեան և արձակման վկայականներից.
- 3) աշակերտների ծնողներից ստացած նուէրներ.
- 4) Եռլշու գաւառի ուխտատեղիներից.
- 5) Գանձասարի վանքի անունով եկած գանձանակադրամներ.
- 6) գանձանակադրամ Եռլշու քաղաքի եկեղեցիներից յօգուտ գպրանոցի.
- 7) գիւղականներից ստացած գանձանակադրամ.
- 8) վանքերի կալուածներից չոփրաշի և բահրա արդիւնք.
- 9) Եռլշու գաւառի և քաղաքի պսակներից ստացած նուէրներ.
- 10) Եռլշու գաւառի և քաղաքի ամեն մի գերդաստանից ստացած 20-ական կոպէկ սրբագրամ.
- 11) Եռլշու գաւառի և քաղաքի քահանաներից մի մի սուբլի սրբագրամ.
- 12) մի քանիսներից ստացած առանձին նուէրներ.
- 13) գպրոցապատկան գումարի տոկոս և կոպէկագրամ արդիւնք.\*)
- 14) Հոգեոր կոչումն ընդունողներից նուէրներ.

\* ) Սինոդը 1838 թ. 11-ն յունիսի № 589 գրութամբ սրոշում է, որ հոգենոր ատեաններում ծառայողների սոճիկներից որոշ տոկոս հանեն, յօգուտ այրեաց և սրբաց. տարեկան 500 ռ., ստացողներից 100-ից 1 կ. իսկ 500 սուբլուց աւելի ստացողներից 100-ից 2 կ.:

- 15) զանազան գրքերի վաճառումից արդիւնք.  
16) Ամարասի վանքի կալուածներից այզիտեղի  
ստացողներից լուսագին կոչուած արդիւնք.  
17) Ղարաբաղի վիճակի հոգեորականներից ստա-  
ցած տուգանադրամներ.  
18) Շահվերդեանի ընծալած Բագւի կրպակի վարձ  
և ալին.

Պէտքէ նկատել, որ մի ժամանակ հոգաբարձու-  
թեան հսկողութեան է լանձնուում թեմի վանքե-  
րի կալուածների եկամուտները, ուս հսկողութիւնը  
շարունակում է մինչև 80 տկան թուականները,  
երբ ժամանակի առաջնորդ Կարապետ եալ. Ալվազեա-  
նը ինչ ինչ անախորժութիւններ և ընդհարումներ  
ունենալով հոգաբարձութեան հետ դիմում է կա-  
թողիկոսին և իրաւունք ստանում, որ վանքերի  
կալուածների եկամուտների հսկողութիւնը կոն-  
սիստորիալին լանձնուի:

Ինչպէս լիշուած ցանկից էլ երեսում է դպրա-  
նոցի եկամուտի ազբիւրները մեծ մասմբ պատա-  
հական, անհաստատ են եղել, ուստի և զանազան ժա-  
մանակներում այդ ազբիւրներից մի քանիսը ցամա-  
քել են, մի քանիսը աւելի քչացել: Դպրանոցի նիւ-  
թականի պատկերը որոշ չափով ցոյց տալու համար  
առաջ ենք բերում 1860—1912 թ. ել և մտից  
հաշիւները.

ԹիԱկնն	Մ Ա Կ . 8 Ք	Ե Լ Ք
1860 —	1976 ս. 94 կ.	446 ս. 98 կ.
1861 —	10,586 , 72 ,	7559 , 85 ,



1862 — 10,362	,	28	,	4585	,	75 $\frac{3}{4}$	,
1863 — 11,961	,	27	,	7583	,	53 $\frac{3}{4}$	,
1864 — 11,461	,	38 $\frac{3}{4}$	,	6045	,	60 $\frac{1}{2}$	,
1865 — 12,390	,	92 $\frac{1}{4}$	,	6866	,	39 $\frac{1}{4}$	,
1866 — 14,426	,	88 $\frac{1}{2}$	,	8820	,	93 $\frac{1}{2}$	,
1867 — 12,787	,	91	,	6596	,	49	,
1868 — 12,395	,	28 $\frac{1}{2}$	,	6464	,	67	,
1869 — 10,335	,	38	,	4962	,	19	,
1870 — 11,534	,	51	,	4983	,	91	,
1871 — 15,591	,	77	,	9322	,	73	,
1872 — 20,765	,	91	,	4475	,	29	,
1873 — 26,565	,	12	,	6143	,	71	,
1874 — 26,883	,	30	,	8260	,	16	,
1875 — 24,289	,	20	,	5031	,	82	,
1876 — 23,972	,	94	,	4827	,	73	,
1877 — 26,369	,	75	,	6392	,	44	,
1878 — 31,351	,	27	,	8713	,	50	,
1879 — 39,176	,	49	,	14,433	,	69	,
1880 — 24,742	,	80	,	17,931	,	5	,
1881 — 10,604	,	24	,	14,358	,	26	,
1882 — 14,374	,	83	,	14,995	,	4	,
1883 — 11,432	,	33	,	12,488	,	73	,
1884 — 13,060	,	49	,	12,414	,	58	,
1885 — 12,544	,	57	,	11,843	,	75	,
1886 — 14,420	,	29	,	12,022	,	64	,
1887 — 18,969	,	22	,	15,305	,	67	,
1888 — 12,901	,	80	,	18,720	,	40	,
1889 — 9,701	,	34	,	11,257	,	9	,

1890 —	9,880	,	81	,	10,987	,	35	,
1891 —	9,963	,	51	,	10,042	,	67	,
1892 —	35,975	,	90	,	16,560	,	57	,
1893 —	47,350	,	55	,	14,919	,	31	,
1894 —	14,947	,	37	,	12,260	,	—	—
1895 —	16,434	,			16,005	,	—	—
1896 —	20,564	,	85	,	16,712	,	65	,
1897 —	14,930	,	45	,	14,491	,	44	,
1898 —	16,110	,	38	,	15,717	,	65	,
1899 —	15,958	,	92	,	18,286	,	65	,
1900 —	18,460	,	21	,	17,706	,	90	,
1901 —	20,997	,	47	,	23,998	,	85	,
1902 —	21,333	,	22	,	22,833	,	27	,
1903 —	29,372	,	74	,	27,463	,	78	,
1904 —	10,000	,	18	,	9,997	,	97	,
1905/6	17,581	,	86	,	17,008	,	14	,
1906/7	30,712	,	77	,	25,163	,	34	,
1907/8	24,772	,	85	,	24,579	,	96	,
1908/9	24,345	,	30	,	24,036	,	1	,
1909/10	31,897	,	76	,	31,439	,	98	,
1910/11	17,345	,	70	,	17,285	,	65	,
1911/12	22,955	,	34	,	22,693	,	90	,

Յուցակից երեսում է, որ գպրանոցը առաւելապէս պատահական գումարներով է պահպանուել, ուստի հոգաբարձութիւնը ստիպուած է եղել ժամանակի ընթացքում աշակերտաների ուսման վարձն աւելացնել. սկզբներում եղել է 6 ո., յետոյ գարձբել է 10 ո., ապա 12 և այժմ 20 ո. լիա-

թոշակ և 10 ռ. կիսաթոշակ. այն էլ ասենք, որ չքաւորների թիւը մեծ մասամբ կազմել է ընդհանուր աշակերտութեան  $30 - 40\%$ -ը.

Դպրոցն ունեցել է երեք պատրաստական և չորս հիմնական դասարան մինչև 1888 թ. այդ թւին 8-ին յուղիսի № 257 կոնդակով Մակար կաթողիկոսը կարգադրել է ժամանակի առաջնորդ Կարապետ եպ. Ալվագեանին պատրաստականների զուգընթաց բաժանումները փակել, քաղաքի եկեղեցիների մօտ ծխական դպրոցներ բանալ և դպրանոցի հիմնական դասարանների թիւն աւելացնել, 1888/9 ուսման տարում բացւում է Ե. դասարան, իսկ 1889/90-ին Զ. դասարան, այսպէս էլ շարունակում է մինչև այժմ: 1903 թ. գեկտ.-ին Բարձրագոյն կարգադրութեամբ դպրանոցը փակւում է և 1905 թ. օգոստ.-ին նոյնպէս Բարձրագոյն կարգադրութեամբ բացւում է:

Դպրանոցի ծրագիրը ժամանակի ընթացքում փոփոխութիւնների է ենթարկուել համապատասխան ժամանակի պահանջների:

Դպրանոցի զեկավարներն եղել են 1861 թւից. 1861 աւագ ուսուցիչ Յարութիւն քհ. Մելքոնեան.

1862 , , , Ներսէս ըէդ Աթաբէդեան.

1863 տեսուչ Գրիգոր վ. Աղափիրեան.

1864—5 , , Պետրոս Շանչեան, օգնակ. Պերճ Պոօշեան

1866 պաշտօնակատար տեսչի Մատթէոս Հայութեան

- 1867—70 թ. տեսուչ Գէորգ Խաչատրեան.  
1871—74 պաշտ. տեսչի Մաղաքիա Պլուզեան և  
Խօրէն Ստեփանէ  
1875 պաշտ. տեսչի Սիմէօն քհ. Տէր Խորակէլեան  
1876 տեսուչ Գէորգ վ. Սուբէնեան և Արիստակէս  
վ. Սեդրակէեան.  
1877—78 տեսուչ դոկտ. Փիլ. Ա. ասակ Պապա-  
ջանեան.  
1879 չիք.  
1880—81 Սեդրակ Մանդինեան.  
1881—82 Համբարձում Առաքելեան.  
1882—84 Զաւադ բէդ Իշխանեան.  
1885—87 Մովսէս Սամուէլեան.  
1888—90 պաշտ. տեսչի Զաւադ բէդ Իշխանեան.  
1890—92 Եղիշէ Մագաթեան.  
1892—94 Նոյեմբ. Լեռն Սարգսեան.  
1894 Նոյեմբ.—96 Եղիշէ Մագաթեան.  
1896—7 Մեսրով վարդ. Տ. Մովսիսեան  
1897/900 Տիրալը վարդապետ  
1900/03 Բենիկ վարդապետ  
1903/04 Ճինչե գեկտ. պաշտ. տեսչի Իշխան  
Զուրաբեան.  
1905/06 տեսուչ Ներսէս վ. Տ. Միքայէլեան.  
1906/07 , Արշակ Զիլինգտորեան.  
1907/08 պաշտօնակատարներ տեսչի Ռ. Քաջբե-  
րունի և Ա. Հայրապետեան  
1908/10 տեսուչ Աւետիք Տէր-Պօղոսեան.  
1910/13 , Բժ. Ն. Եարամիշեան.

Յիշենք նաև 1861 թւականից սկսած գտըա-  
նոցումս պաշտօնավարող գասատուների մօտաւոր  
ցանկը.

Ներսէս բէզ Աժտաբէգեան  
Բարսեղ քահ. Տէր Մովսիսեան  
Կարապետ քահ. Հախումեան  
Յակով Վարսավիրեան  
Գրիգոր Տէր Յակովիկեան  
Աւագ քահ. Տէր Աւագեան  
Խաչատուր Տէր Թագէոսեան  
Յարութիւն Պօղոսբէգեան  
Յակով Իշխանեան  
Յակով Տէր Ստեփանեան  
Կարապետ Մուրագեան  
Գրիգոր քահ. Տէր Ղազարեան  
Մեսրով Տէր Յովհաննիսեան  
Գալուստ վար. Փափազեան  
Աղաթօն Սմբատեան  
Նարիման բէզ Փիրումեան  
Աղէքսանդր Մանուչարեան  
Գրիգոր Դովլաթեան  
Սարգիս Տէր Ղազարեան  
Զալալ բէզ Զալալեան  
Աղասի Տէր Յարութիւնեան  
Իսրայէլ Մամիկոնեան  
Սահակ Մախմուրեան  
Յովհաննէս Թամամշեան  
Մազաքիս Պլուզեան

Սիմէօն քահ. Տէր Խարալէլեան  
Մխիթար Հասան-Զալալեան  
Գրիգոր բէկ Շահնազարեան  
Բողդան Բողդանեան  
Գրիգոր Տէր Միքալէլեան  
Գարբիէլ Ղուլիքեխեան  
Ստեփաննոս սարկ. Տէր Աւետիքեան  
Պետր. Պլեղանսկի  
Վասիլի Պաւլով  
Յակովը բէկ Մելիք Շահնազարեան  
Մարգարէ Պաւլեան  
Յովհաննէս քահ. Մախմուրեան  
Մովսէս Գէորգեան  
Արշակ Եարամիշեան  
Գրիգոր Տէր. Գէորգեան  
Կիւրեղ Վ. Սրապեան  
Յովհաննէս Լալալեան  
Յովսէփ Վ. Փինաչեան  
Կոստանդին Մատեխով  
Արսէն Թօխմախեան  
Ներսէս Շահլամեան  
Յովհաննէս Իշխանեան  
Աղէքսանդր Յովհաննիսեան  
Դավիթ Աղալեան  
Զաւադ-բէկ Իշխանեան  
Սիմէօն Հախումեան  
Յակովը Խօջամիլեան

Գալուստ Մախմուրեան  
Միքայէլ Յարութիւնեան  
Վարժուհի Զառի Արզումանեան  
Օր. Ոսկի Թաւրիզեան  
Նիկողայոս Տէր-Աւետիքեան  
Անդրէաս Արբահամեան  
Նիկողայոս Յարութիւնեան  
Վահան Դադեան  
Օր. Եղիսաբէթ Տէր-Մովսիսեան  
Լևոն Աթաբէգեան  
Գրիգոր Թառումեան  
Աղէքսանդր Զալուցեան  
Մակար Վարդ. Բարիսուդարեան  
Աղէքսանդր Քահ. Բաղդասարեան  
Գարեգին Քահ. Յովհաննիսեան  
Յովհաննէս Թամամշեան  
Սամուէլ Գիւլգագեան  
Գրիգոր Թառումեան  
Սարգիս Ղուլիքեխեան  
Արբահամ Շահիջանեան  
Անդրէաս Արբահամեան  
Սիմէօն Շահբաղեան  
Յովսէփ Զանումեան  
Գրիգոր Բաղդեան  
Արսէն Տէր-Դաննիէլեան  
Քալանթարեան  
Յ. Ճաղարիզեան

- Ա. Արեղեան  
Ն. Մելիք Թանգեան  
Պ. Հովիւեան  
Ք. Փիրջանեան  
Աղամեան  
Ո. Բարխուդարեան  
Ե. Տէր-Յակովեան  
Գ. Ղարաջեան  
Ք. Սերովեան  
Ս. Ալժայեան  
Ա. Դէմուրեան  
Բ. Տէր-Սահակեան  
Տ. Տէր-Գրիգորեան  
Աղէքսանդր քահ. Բաղդասարեան  
Պ. Վարդապետեան  
Պ. Պարունակեան  
Պ. Մելքոնմեան  
Զ. Գարինեան  
Արշակ Տէր-Միքայէլեան  
Ստեփ. Կանտելեան  
Աղէքսանդր Թարխանեան  
Աղ. Զաշիդեան  
Իսազ. Տէր-Յովհաննիսեան  
Վահան Նիկոլոսեան  
Յովհաննէս Միքայէլեան  
Պօղոս Հասան-Զալալեան  
Սարգիս Զանումեան

Վաղինակ Տէր-Ղուկասեան  
Մելիքսէդէկ Տէր-Ռոկանեան  
Գէորգ Հախեան  
Աղ. Տէրտէրեան  
Կարապետ Թիւնիքէկեան  
Եշխան Զուրաբեան  
Եր. Լուլալեան  
Ար. Զիլինկարեան  
Պ. Քուշմանեան  
Աս. Շահնազարեան  
Աղ. Բարութչեան  
Պ. Ստամանեան  
Ար. Աքեղեան  
Արշ. Տէր-Ռոկանեան  
Յարութիւն Պապովեան  
Հայկ Յովհաննիսեան  
Համբ. Արովեան  
Հայկ Յովակիմեան  
Մկր. Տէր-Շահակեան  
Լեռն Ազախանեան  
Գարեգին Խաժակնեան  
Յակ. Արիստակէսեան  
Ո. Մանասեան  
Հը. Աճառեան  
Յ. Մելիքեան  
Արշ. Մեհրաբեան  
Աւ. Տէր-Յարութիւնեան

- Յ. Խաչատրեան  
Մ. Ղարաբէգեան  
Արամ Օլթէցեան  
Յակ. Յովհաննիսեան  
Գր. Բալայեան  
Խ. Վարդապետեան  
Ա. Գեանջեցեան  
Յար. Պետրոսեան  
Հ. Կոստաննեան  
Տ. Իւզբաշեան  
Սիօն Ասլանեան  
Ա. Բարսեղեան  
Կ. Նարինեան  
Ռ. Տէր-Գրիգորեան  
Բ. Դանիէլլէկեան  
օր. Շ. Յուրութիւնեան  
օր. Ա. Գրիգորեան  
Լ. Գեանջեցեան  
Ե. Գրիգորեան  
Մ. Ատեան  
Արս. Տէրտէրեան  
Մ. Տէր-Մկրտչեան  
Յ. Տէր-Յակովեան  
Հ. Խաչատրեան  
Ար. Բէջանեան  
Ռ. Մանասեան  
Ո. Սարգսեան

- Գեղ. Տէր-Մինասեան  
Իս. Տէր-Ղազարեան  
Հ. Մուսալէլեան  
Լ. Թախտաճեան  
Բ. Թորոսեան  
Ս. Տօնեան  
Ան. Տէր-Միքայէլեան  
Սպ. Մելիքեան  
Ա. Աստուածատրեան  
Ն. Աղբալեան  
Թ. Տէր-Յովհաննիսեան  
Մ. Շահգելգեան  
Գր. Տէր-Պօղոսեան  
Վ. Փափազեան  
Տիկ. Հ. Տէր-Միքայէլեան  
Գր. Ղարագեօղեան  
Ա. Տէր-Ղուկասեան  
Գ. Մեսրովըեան  
Ս. Միրզալեան  
Հ. Վարդապետեան  
Ա. Աւագեան  
Ա. Ճգնաւորեան \*)  
Աշակերտների թիւը ուսումնական տարի-ների ընթացքում եղել է.  
1886—7 ուսում. ա. 359 աշակերտ  
1887—8 , , 325 ,

\*) Գժրախտաբար անհրաժեշտ աղբիւրները ձեռքի տակ չունենալու պատճառով, հնար չեղաւ ուսուցիչների լիակատար ցանկը դնելու:

1888—9	,	299	,
1889—90	,	273	,
1890—1	,	316	,
1891—2	,	324	,
1892—3	,	355	,
1893—4	,	412	,
1894—5	,	430	,
1895—6	,	497	,
1896—7	,	543	,
1897—8	,	541	,
1898—9	,	506	,
1899—900	,	512	,
1900—01	,	583	,
1901—02	,	528	,
1902—03	,	570	,
1903—04	,	577	,
1904—05	,	<b>փակէ եղել.</b>	
1905—06	,	466	,
1906—07	,	398	,
1907—08	,	361	,
1908—09	,	360	,
1909—10	,	280	,
1910—11	,	271	,
1911—12	,	258	,
1912—13	,	247	,

Դպրանոցի գործերից հնարաւոր եղաւ առ  
ալժմ հանել 1861 թւից դպրանոցի Պ. դասարանն  
աւարտողների անունները.

1 8 6 1

Մովսէս Տէր Ստեփանեան  
Լևոն Տէր Գրիգորեան  
Խաչտառուր Թագեսսեան  
Յովհաննէս Տէր Գրիգորեան (ալժմ Վահան  
վարդապետ)  
Կարապետ Մելիք Շահնազարեան  
Յովհաննէս Տէր Ղազարեան  
Մովսէս Տէր Դաւթեան

1 8 6 2

Ներսէս Տէր Անդրեասեան  
Յովհաննէս Տէր Յարութիւնեան  
Սիմէօն Տէր Թագեսսեան  
Գրիգոր Յարութիւնեան  
Ներսէս Հայրապետեան

1 8 6 3

Յովհաննէս Պետրոսեան  
Յակովը Ահարոնեան

1 8 6 4

Խաչտառուր Բարեքեօխեան

1 8 6 5

Թուման Ղուլեան

Աստուածատուր Ղուլեան  
Առաքել Խաչատրեան:

1 8 6 6

Մեսըովք Տէր Գրիգորեան  
Կարապետ Իսկանդարեան  
Գրիգոր Տէր Միքայէլեան

1 8 6 7

Հայկ Խաչատրեան  
Յովհաննէս Հաստն Զալալեան  
Առաքել Բահմաթրեան  
Ստեփան Տէր Աւետիքեան

1 8 6 8

Սմբատ Տէր Աւագեան  
Մկրտիչ Անանեան  
Մովսէս Կրասիլնիկեան  
Զանում Զանումեան  
Նիկողալոս Օհանքէգեան  
Վահրամ Տէր Զաքարեան  
Նիկողալոս բէկ Մելիք Եսայեան

1 8 6 9

Աստուածատուր Բաղդասարեան  
Խաչատուր Տէր Յովհաննիսեան

Միքայէլ Հախումեան

1 8 7 0

Եփրեմ Մամիկոնեան

1 8 7 1

Յարութիւն Տէր Պետրոսեան  
Միքայէլ Տէր Յովհաննիսեան  
Համբարձում Խաչատրեան  
Թովմաս Իւղբաշեան  
Արտեմ Խաչատրեան  
Սերգէյ Թառումեան  
Սարգիս Ղուլիքելիսեան  
Մարգար Յովհաննիսեան  
Կարապետ Խսպանդարեան  
Հայրապետ Ճգնաւորեան  
Աւետիս Ճգնաւորեան  
Աքրահամ Բաղդադեան  
Իորայէլ Զալեան

1 8 7 2

Նիկողայոս Իւղբաշեան  
Արշակ Եարամիշեան  
Հայրապետ Տէր Առաքելեան  
Աւագ Էէկ Վարազեան

1 8 7 3

Ներսէս Տէր Յովհաննիսեան  
Դազար Նազարեան  
Սարգիս Լալաբէկեան  
Սիմէօն Հախումեան  
Յովհաննէս Բէլուբէկեան  
Համբարձում Մախմուրեան  
Յովհաննէս Տէր Մկրտչեան  
Ազամալ Աղամալեան  
Աստուածատուր Մախմուրեան  
Գրիգոր Տէր Յովհաննիսեան (Մռլացան)  
Յովհաննէս Աղամալեան

1 8 7 4

Սամսոն Աթաբէկեան  
Սիմէօն Իւզբաշեան  
Յակովը Իւզբաշեան  
Աստուածատուր Կարապետեան  
Խաչատուր Եարամիշեան  
Յակովը Յովհաննիսեան  
Առաքել Բաքախանեան (Լէօ)  
Սիմէօն Յովհաննիսեան  
Բալտսան Յովհաննիսեան  
Բարսեղ Բալալեան  
Անդրէաս Տէր Յարութիւնեան  
Կարապետ Մելիք Շահնազարեան

Դաւիթ Մելիք Շահնազարեան  
Աստուածատուր Տէր Աստուածատրեան

1 8 7 5

Յովհաննէս Տէր Յովհաննիսեան  
Գրիգոր Մելիք Շահնազարեան  
Մկրտիչ Բէլլուրէկեան  
Աբրահամ Դաստակեան  
Աղէքսանդր Պետրոսեան  
Արշակ Ղուլեան

1 8 7 6

Համբարձում Մելիք Շահնազարեան  
Գրիգոր Մելիք Շահնազարեան  
Միքայէլ Քալանթարեան  
Պօղոս Ղահրամանեան  
Գրիգոր Տէր Գրիգորեան  
Միհիթար Դաւիթեան  
Միքայէլ Սարումեան  
Արշակ Յարութիւնեան  
Գրիգոր Բայանդըրեան  
Ալէքսան Յովհաննիսեան  
Համբարձում Սարուխանեան  
Բօղդան Շիսեան  
Դաւիթ Յարութիւնեան  
Սեդրակ Տէր Ղազարեան  
Ալէքսանդր Ղազարեան

Միսակ Տէր Յովհաննիսեան

Նիկողայոս Մալեան

Մովսէս Քեօխեան

Գաւիթ Զախարեան

Գարեգին Տէր Գրիգորեան

1 8 7 7

Կոստանդ բէկ Աւանքէկեան

Յովսէփ Մէլիք Եահնազարեան

1 8 7 9

Հայրապետ Օբբէլեան

Գանիկ Մէլիք Փաշալեան

Վիքայէլ Զուրաբեան

1 8 8 2

Միքայէլ Անանեան

Բաղրատ Բաղրատեան

Յովհանն Գաւիթեան

Առատամ Ղոնդազսազեան

Յարութիւն Գանիկէլեան

Արքահամ Իշխանեան

Պօղոս Եխեան

Բաղրատ Տէր Սահակեան

Փարսադան Տէր Մովսէսեան (այժմ Մեսրոպ  
եպ.)

Պետրոս Տէր Բարաղամեան  
Գըիգոր Տէր Թովմասեան  
Ալէքսան Տէր Ղազարեան  
Արքահամ Տէր Գասպարեան  
Նիկողալոս Ահարոնեան (ալժմ Եղիշէ վարդա-  
պետ)

1 8 8 4

Սիմէօն Խօջաբաղիրեան  
Ներսէս Ստեփանեան  
Յակովը Մելիք Միրզախանեան  
Յովհաննէս Տէր Մկրտչեան  
Արամ Յովհաննիսեան  
Յակովը Քոչարեան  
Գաբրիէլ Գագաեան .  
Եփրեմ Տէր Մանուէլեան  
Արքահամ Հասան-Զալալեան  
Սամուէլ Սամուէլեան  
Իսաջան Տէր Յակովըեան  
Մելիքսէդէկ Տէր Մարտիրոսեան

1 8 8 5

Արշակ Յարութիւնեան  
Յարութիւն Վարդապետեան  
Հայրապետ Եղիգարեան  
Արտակ Ալահվերդեան  
Արսէն Տէր Գանիէլեան  
Սեղրակ Տէր Գրիգորեան  
Մաղաթ Տէր Գրիգորեան

1 8 8 7

Աստուածատուր Մամալեան  
Նիկողայս Տէր Յակովեան  
Լեռն Քոչարեան  
Գրիգոր Տէր Ստեփանեան  
Հայկ Մելքոնմեան  
Մէլիքօ Սափարեան  
Տիգրան Թամրազեան  
Յարութիւն Պետրոսեան

Զ. դասարան աւարտողներ

1889—90

Աղէքսանդր Թարխանեան  
Ներսէս Տէր Կարապետեան  
Մելքոնէգէկ Տէր Ոսկանեան  
Տիգրան Ժամհարեան

1890—91

Աւագ Աբաղեան  
Աղէքսանդր Բարութչեան  
Բէգլար Դալլաքեան  
Ղուկաս Աղաբէկեան (այժմ Էաբգէն վարդ.)  
Միքայէլ Ղոնեան  
Տիգրան Տէր Գրիգորեան  
Վարդան Տէր Օհանեան

1891 — 92

Գրիգոր Ալեքսանեան  
Արտաշէս Բաբայեան  
Լևոն Բաբայեան  
Գաբրիէլ Բահաթրեան  
Մելիքսէթ Շիրինեան  
Յովհաննէս Վարդապետեան  
Արշակ Տէր Մանուէլեան

1892 — 93

Աւագեան Մարգար  
Գաբրիէլեան Յովհան  
Միրզայեան Առան  
Մահտեսի Բաբայեան Մարտիրոս  
Ռուբենաբեան Խոսրով  
Տէր-Յակովը Եան Մէլիքսէթ  
Տէր-Պօղոսեան Խաչակ

1893 — 94

Գեանջեցեան Աղէքսանդր  
Ճգնաւորեան Արքահամ  
Մկրտչեան Աղաբէգ  
Տէր-Արքահամեան Արգար  
Տէր-Աւագեան Խաչատուր  
Մահտեսի Բաբայան Զաքարէ  
Տէր-Յովաննիսեան Յակովը

1895—96

Բահաթրեան Սարգիս  
Դուկասեան Արսէն  
Յովհաննիսեան Յակովը  
Եահմուրագեան Աւագ  
Վարդապետեան Խաչատուր  
Տէր-Միքայէլեան Քրիստափոր  
Տէր Յովհաննիսեան Բախչի

1896—97

Զառափեան Գարեգին  
Յովսէփեան Լևոն  
Յարութիւնեան Տիգրան  
Նարինեան Կարսապետ  
Եամախեան Սամսոն

1897—98

Բաղդասարեան Արսէն  
Թումեան Թուման  
Մելիք Ալլահզիրգեան Աստուածատուր  
Փանեան Յովհաննէս  
Իշխանեան Բախչի  
Տէր-Իսրայէլեան Արշաւիր

1898—99

Մելիք-Փարսագանեան Միքայէլ

Տէր-Յովհաննիսեան Թէոգորոս  
Տէր-Յարութիւնեան Աւետիս  
Արքահամեան Քրիստափոր  
Վարդապետեան Համբարձում  
Տէր-Աստուածատրեան Հայկ

1899 — 900

Առատամեան Գէորգ  
Նարինեան Սիմէօն  
Տէր-Յովհաննիսեան Արսէն  
Առաքէլեան Իսաջան  
Ծատուրեան Աղէքսանդր  
Երիխոնեան Արշակ  
Տէր-Մովսիսեան Թեմուր

1900 — 01

Ալէքսանեան Բաղդասար  
Առաքէլեան Գրիգոր  
Բահաթրեան Աղէքսանդր  
Բալանդրեան Աշոտ  
Գասպարեան Լևոն  
Գորգեան Գրիգոր  
Զաքարեան Միքայէլ  
Միքեան Հմայեակ  
Յովսէփեան Ղևոնդ  
Եահբագեան Վաղարշակ  
Սիմէօնեան Գրիգոր

Սուլէլմանեան Թէոդորոս

1901—02

Բաղդասարեան Գերասիմ  
Հայրապետեան Լևոն  
Մամիկոնեան Վարդան  
Մելիք Շահնազարեան Գէորգ  
Պարոնեան Սարգիս  
Տէրտէրեան Արսէն  
Մէժլումեան Սարգիս

1902—03

Մելիք Փարսագանեան Դաւիթ  
Մուսալէլեան Հայրապետ  
Խաչատրեան Մկրտիչ  
Տէր Գրիգորեան Վաղարշակ  
Տէր Գրիգորեան Գրիգոր  
Տէր Սահակեան Վարդան  
Տէր Մանուէլեան Լևոն

1903—05

Դպրանոցը փակ է եղել

1905—06

Իշխանեան Եղիշէ<sup>1</sup>  
Խաչատրեան Յակովը

Կիրակոսեան Գալբիէլ  
Հասան-Զալտեան Միքայէլ  
Մելիք-Փարսադանեան Ստեփան  
Յարութիւնեան Յովսէփ  
Փոլեան Ալբահամ

1906—07

Առատամեան Գրիգոր  
Բահաթրեան Գրիգոր  
Բաղդասարեան Աղէքսանդր  
Բաղդատեան Միքայէլ  
Բարաղամեան Բագրատ  
Գասպարեան Աւետիս  
Կանայեան Զաւէն  
Մելիք Մանուչարեան Լևոն  
Յակովըեան Յակովը  
Յովհաննիսեան Սեդրակ  
Նարինեան Վաղարշակ  
Տէր-Գրիգորեան Ղազարոս  
Տէր-Ղազարեան Միսակ  
Տէր-Ղուկասեան Ստհակ  
Փոլեան Սիմէօն  
Քամալեան Եսայի

1907—09

Գլլրանոցի Զ. դասարանը փակ է եղել

1909—10

Մարտիրոսեան Գրիգոր  
Ղազարեան Գրիգոր  
Պետրոսեան Արտաշես  
Նաքարեան Մանուչար  
Տէր-Մինասեան Արտաշես  
Հայոսմեան Աշոտ  
Ղահրամանեան Լևոն  
Յակովլեան Լալազար  
Նարինեան Արբահամ  
Վարդապետեան Վարդան  
Տէր-Գրիգորեան Արտաշես  
Նարինեան Ռուբէն  
Տէր Ղազարեան Իսրայէլ

1910—11

Ասրեան Գրիգոր  
Բաղդասարեան Արամ  
Գրիգորեան Գէորգ  
Գրիգորեան Երեմիա  
Յովհաննիսեան Սոկրատ  
Ասրգսեան Վահան  
Տէր-Գրիգորեան Գէորգ  
Տէր-Սահակեան Տիգրան

1911—12

Ալվագեան Մավսէս

Ալվազեան Մարտիրոս  
Աղամալեան Անդրէաս  
Առստամեան Արշակ  
Առաքելեան Սիմէօն  
Բալասանեան Աղէքսանդր  
Բէկլարեան Արամ  
Թամրազեան Մուշեղ  
Ներսիսեան Յարութիւն  
Յակովեան Գրիգոր  
Տէր-Գրիգորեան Խորէն  
Տէր-Ղազարեան Շմաւոն  
Տօնեան Խուրէն  
Արզումանեան Գրիգոր

---

Գպրանոցում հետզհետէ հիմնուել է գրադարան, որը ժամանակի ընթացքում թէ հոգաբարձութեան, թէ գրսի նուիրատուների օժանդակութեամբ մեծացել է. նոլնոյէս հիմնուել է ֆիզիքական կաբինետ, որն անմիխթար գրութեան մէջ է մնացել գրեթէ մինչև այժմ էլ:

Ահա Ալարաբազի թեմի ուսման, գաստիարակութեան մեծ պահանջ ունեցող միակ միջնակարգ գպրանոցի մօտաւոր պատկերը: Այս չոր ու յամաք թւերն էլ ցոյց են տալի, թէ իւր 75-ամեալ զոլութեան ընթացքում գպրանոցը որքան խոչընդուների, գժբաղդութիւնների է հանդիպել, որքան ծանր հանգամանքներում են պաշտօնավարել

Հայ չարքաշ ուսուցիչներն և ինչպիսի հակառառողջապահական, անհիւրընկալ պայմաններում են սովորել հայ աղքատ ժողովրդի քնքոյց զաւակները:

Աւելորդ է ասել, որ Ղարաբաղի աւերակների գերածնութեան միակ կենդանի ու հիմնական ոլժը Ղարաբաղի Հոգեոր Թեմական Պալրանոցն է, որի ամահովութեան անհրաժեշտ հարցն է գրուած հրապարակում. թող ամեն մի հայ, մանաւանդ զարաբաղցի, իւր օժանդակութիւնը ցոյց տայ գիտութեան լոյսը տարածող ալգ, պատկառելի անցեալ ունեցող, հայ հասարակութեանը գնտհատելի ծառալյութիւն անող, հիմնարկութեանը:

---

## Հ. ԱԹԵՎԵԼԵՅՆ

### ԻՄ ՏԻԴԱՊԱՐԹԻԿԱՆԵԲԸ

Անցել է ուղիղ 33 տարի ալն օրից (1880 թ. փետրվար ամիսը), երբ ես, ուսանող Մօսկվայի Պետրօվսկի՝ Ռազումօվսկի Երկրագործական Ակադեմիայի, ստիպվեցալ թողնել Ակադեմեան և վերադառնալ իմ հայրենիքը՝ Եռշտի, խիստ տրագիկական պայմանների մէջ:

Հայրս, Աստուածատուր Առաքելեան, 1880 թ. փետրվարի սկիզբներին իր կալուածը գնալիս, ճանապարհին, սպանվել էր մի անտառի մէջ աւտզակ թուրքերից, թողնելով փոքրահասակ 3 զաւակներ՝ 2 աղջիկ և մի տղալ։ Ընտանիքի մեծը և պետը ես էի, այդ ժամանակ 24 աարեկան ուսանող. ես և պէտքէ ստանձնէի մօրս և փոքրիկ եղբօր ու քոլրերիս հոգատարութիւնը և խնամատարութիւնը։ Ուստի մայրս հեռագրով կանչեց ինձ գալ Եռշտի։ Ես կարծում էի, որ կը գամ Եռշտի, մի քանի ժամանակ կը մնամ և կը վերադառնամ Մօսկվա՝ շարունակելու և աւարտելու ուսումս։

Աւաղ, ինձ վիճակված չէր իրագործված տես-  
նելու իմ փայփայած ցանկութիւնը՝ լինել ուսում-  
նական գիւղատնտես և քաղաքատնտես գործելու  
համար հայ գիւղական ժողովրդի մէջ, ինչպէս ես  
ծրագրել էի ինձ համար:

Ես եկալ Շուշի 1880 թ. փետրվարին և  
ստիպեցալ մնալ ու հրաժարվել ուսումս շարու-  
նակելու մտքից: Այդ ժամանակ Շուշումն էին  
գտնվում Յովհաննես Տէր Գրիգորեանը\*), (որին  
ես գեռ Բագվում, ուր սովորում էի բէալական  
գլուխում, ծանօթ էի իրքե «Մշակի» «Կասպիացի»  
անունով թղթակցի և որն այժմ Ղարաբաղի թե-  
մի թեմական տեսուչն էր) և Ղազարոս Աղայեա-  
նը, իրքե ուսուցիչ Թեմական գլուխի: Ես սկսեցի  
լաճախել նրանց շրջանը, որ կազմված էր թեմա-  
կան և օրիորդական գլուխի ուսուցչական խմբե-  
րից և տեղական մի քանի ինտիլիգենտներից, ո-  
րոնց մէջ աչքի էր ընկնում քաղաքային բժիշկ  
Մարգար Առատամեանցը:

Եւ շուտով կազմվեց մի մտերմական գրական-  
մտաւոր շրջան: Յաճախ հաւաքվում էինք ինձ  
մօտ կամ Ղազարոս Աղայեանցի մօտ: Դպրոցի տե-  
սուչն էր այդ ժամանակ Սեդրակ Մանդինեանցը:  
Մեր շրջանին մօտեցան գրեթէ բոլոր ուսուցիչնե-  
րը: «Թեմականի» հետ (այսպէս էր կոչվում Թե-  
մական տեսուչը մեր շրջանում) շարունակ խօսում

\*). Ապագայում Վահան վարդապետ Տէր Գրիգորեան:

Եինք եկեղեցական - ծխական գպրոցների թիւը  
Ղարաբաղում աւելացնելու անհրաժեշտութեան  
մասին: «Թեմականը» առ հոսարակ մեծ ազգեցու-  
թիւն ունէր մեր շրջանի վրա իր լրջութեամբ,  
ծանրաբարութեամբ. նրան հրաւիրել էր պաշ-  
տօնի Արիստակէս վարդապետ Սեգրակեանը, երբ  
Ղարաբաղի թեմի կառավարիչ էր. բայց ժողովրդա-  
կանութիւն ունէր ամենից շատ Ղազարոս Աղալեան-  
ցը. նո ինձ հմայել էր մայրենի լեզուն աւանդելու  
իր նոր մէթոգով, ևս առաւել իր «Քրօղլի» երգով:

Մարտ ամսին ես ստիպվեցայ հօրս գործերը  
կարգաւորելու նպատակով զնալ Թավրէզ, ուր  
հայրս կալուած և զոյք էր թողել: Վերագարձայ  
Շուշի միայն յունիսի վերջերին և գտալ մեր շրր-  
ջանի մէջ մեծ իրարացնումն: Սեգրակ Մանդինեա-  
նը հրաժարվել էր տեսչական պաշտօնից: Ղարա-  
բաղի առաջնորդ էր նշակվել Անդրէաս արքեպիս-  
կոպոսը, որ ճեմարանի տեսուչ ևս լինելով, իր  
կողմից թեմը կառավարելու համար ուղարկել էր  
իբրև փոխանորդ Կարապետ վարդապետ Ալվազ-  
եանցին: Վերջինս շուտով ընդհարվել էր Ղ. Աղալ-  
եանի, Թեմականի և ուսուցչական խմբի հետ. կազ-  
մել էր առաջիկայ ուսումն. տարվայ համար մի  
նախահաշիւ, որով նշանաւոր չափով կը ճատել էր  
ուսուցիչների ոռնիկները և յայտարարել էր ու-  
սուցչական ամերող խումբը արձակված, որպէսզի  
կարողանալ ինքն նոր խումբ կազմել էժան ոռ-

ճիկներով։ Նա, առհասարակ, տրամադրիք չէր պահելու նախկին խումբը, բայց ուղղակի այդ չէր առում, այլ արձակելով ամբողջ խումբը, առաջարկում էր, որ ցանկացողները նորից խնդրագիր տան, եթէ կամենում են շարունակել իրանց պաշտօնը՝ միայն պակասեցրած ռոճիկներով։

Եւ սկսվել էր կոիւ վարդապետի և Աղայեանցի ու խմբի միջև։ Քաղաքն ևս բաժանվել էր երկու բանակի «Աղայեականների» և «Ալվազեանականների»։ Հոգաբարձութիւնն ևս Ալվազեան վարդապետի կողմն էր։

Ես ծանօթ էի Ալվազեան Կարապետ վարդապետի հետ. 1874 թ. Թալիրիզից Շուշի տեղափոխվելիս մեր ընտանիքի հետ, ես կանգ էի առել Երևանում մի ամբողջ ամիս (այդ ժամանակ ես 18 տարեկան պատանի էի) և ազդտեղի ազգային շրջանակներում ծանօթացել էի Ալվազեան Կարապետ վարդապետի հետ, որ այդ ժամանակ տեղական պրօգիմնազեալում հայոց լեզուի և կրօնի դասատու էր և վայելում էր երիտասարդների շրջանում մեծ ժողովրդականութիւն, իբրև ազգաւէր և սլերճաբան քարոզիչ։

Օգտվելով իմ այդ ծանօթութիւնից ես փորձեցի հաշտեցնել երկու պալքարող կողմերը։ Ես անկեղծօրէն ցանկանում էի, որ մնայ Դ. Աղայեանը իր ամբողջ խմբով և ինքն Աղայեանցը նըշանակվի տեսուչ թեմական դպրոցի Ս. Մանդին-

եանի տեղ։ Սակայն իմ միջնորդութիւնս անլաջող անցաւ. անկարելի եղաւ հաշտութիւն կալացնել։ Կռիւը շարունակվեց։ Ուսուցիչներից մի քանիսը արդէն յուսահատ՝ մտածում էին այլ տեղերում պաշտօն որոնել։

Յուլիս ամիսն էր (1880 թ.). իմ ուսանող ընկերներից մի քանիսը (Յովսէփ Տէր-Մովսէսեան, Գրիգորիս Իւզբաշեան) և ընկերներիցս ոմանք (Մովսէս Կրասիլնիկեան և այլք) եկել էին Շուշի և մենք զուարճանում էինք՝ քէֆեր կազմակերպելով «Հեխի» աղբիւրում կամ «Թթու ջրում»։ Այդ քէֆերին մասնակցում էին նաև Դ. Աղայեանը, Ալէքսան Յովհաննիսեանը, բժ. Մ. Առատամեանը, Սիմէօն Հախումեանը, Զումշում Յարութիւնեանը, Նիկոլայ Յարութիւնեանը, նաև Գալուստ Մախմուրեանը և Միխայէլ Յարութիւնեանը։ Վերջին երկուսը նոր էին աւարտել Բագվի ըէալական գպրոցը և կամենում էին գնալ շարունակել իրանց ուսումը, բայց միջոցների պակասութեան պատճառով չը գիտէին ինչ անեն։

Եւ ահա այդ յուլիսեան օրերից մէկին, առաւօտեան վաղ, գալիս են ինձ մօտ թեմական տեսուչ Յովհաննէս Տէր Գրիգորեանը և Ղազարս Աղայեանը և յայտնում, որ ամբողջ օրը պէտք ինձ մօտ մնան, ինձ մօտ ճաշեն, որովհետեւ շատ կարեսը գործ ունեն։

— Իու համակըումես, չէ համբարձում-ջան,

ասոց Աղայեանցը, Աարաբաղի Հայութեան մտա-  
ւոր—բարոյական և հոգեոր վերածնութեան գոր-  
ծին, որի համար քեզ հետ միասին ծրագիրներ  
էինք երկնում և կազմում:

— Ի հարկէ, համակրում եմ, ինչու ես նո-  
րից հարցնում:

— Նրա համար, որ ալժմ հասել է ժամը,  
երբ դու գործով և ոչ խօսքով պէտքէ ցոյց տառ  
քո համակրութիւնը և աջակցութիւնը:

— Բոլոր հոգովս և սրտովս. բայց ինչ պէտ-  
քէ անեմ դրա համար:

— Ի՞նչ, պէտքէ որ թեմական և օրիորդական  
դպրոցների ուսուցչական խուժը, որ Արվագեանը  
արձակել է, մնալ իր պաշտօնի մէջ և շարու-  
նակէ անընդհատ իր գործունեութիւնը:

— Եատ գեղեցիկ, բայց ինչպէս անենք որ  
մնան. Հոգաբարձութիւնը և Այլազեան վարդա-  
պետը մի այնպիսի նախահաշիւ են կազմել, որով  
անհնարինէ և խուժը պահել և տեսուչ ունե-  
նալ, իսկ կրծատված ոռճիկներով դուք չէք կարող  
մնալ, քանի որ ձեր ստացած ոռճիկներն ես ար-  
դէն մեծ բան չեն:

— Ոլդ մենք գիտենք և հէնց դրա համար  
եկել ենք քո աջակցութիւնը ինդրելու:

— Ես պատրաստ եմ ամեն կերպ աջակցել  
ձեզ, բայց ինչով և ինչպէս:

— Դու պէտքէ լանձն առնես թեմական

և օրիորդական դպրոցի տեսչական սլաշտօնը այն  
ևս ձրիաբար, վրայ բերաւ Դ. Աղայեանցը:

— Ե՞ս, բացականչեցի:

— Այս, դու, ասաց թեմականը:

— Բայց մտածեցէք, բարեկամներս. մի կողմն  
թողած, որ գուշք վիրաւորումէք համեստութիւնս,  
ինչպէս կարող էք գուշք առաջարկել մի անփորձ  
և գեռ կեանքի մէջ նոր ոտք կոխող երիտասարդի  
մի այդպիսի ծանր և պատասխանառու պաշտօն,  
որի համար պահանջվումէ և փորձառութիւն և  
մանկավարժական հմտութիւն, որոնցից զուրկ  
եմ ես:

— Այդ բոլոր առարկութիւնների մասին մենք  
արդէն մտածել ենք և այնուամենալիւ կանգ  
ենք առել քեզ վրա: Մեզ հարկաւոր է մի անձն,  
որ նախ համամիտ և համերաշխ լինի մեզ հետ,  
տոգորված անկեղծօրէն ազգային առաջադիմական  
ուղղութեամբ և համոզմունքներով. երկրորդ,  
համարումն և յարգ ունենալ տեղական ժողովրդի  
մէջ. երրորդ, համակրութիւն ունենալ առաջնորդի  
և կաթողիկոսի կողմից (այդ ժամանակ առաջնոր-  
դը, ինչպէս ասացինք, Անդրէաս՝ արքեպիսկոպոսն  
էր և ամենայն Հայոց կաթողիկոսը, Գէորգ IV. ը).  
չորրորդ, յօժարվի ծառայել գոնէ մի տարի ձրիա-  
բար, որպէս զի ուսուցչական խումբը կարողանալ  
նոյն ոռճկով մնալ. հինգերորդ, վարչական ընդու-  
նակութիւն ունենալ: Դու որոշ չափով ունիս այդ

առաւելութիւնները. գու տեղացի ես և Շուշում  
յարգված մի ընտանիքի զաւակ, ունիս մեծ կապեր.  
քեզ ճանաչում են լաւ կողմից առաջնորդը և  
կաթողիկոսը և յօժարութեամբ կը հաստատեն քո  
ընտրութիւնը: Քալով մանկավարժական հմտու-  
թեան պակասութեան, մենք կը լինենք քո օգնա-  
կանները և այդ մասը մեր վրա կառնենք:

— Բայց հոգաբարձութիւնը կընտրի ինձ  
տեսուչ:

— Այս, մենք արդէն խօսել ենք և պատ-  
րաստել հողը. մնում է ստանալ քո համաձար-  
նութիւնը:

Աղայեանցը և Թեմականը, որոնց եկաւ միա-  
նալու և ուսուցիչ Ալէքսան Յովհաննիսեանը  
(այժմ հանդուցեալ) շարունակեցին համոզել ինձ  
և խնդրել համաձայնութիւնս:

Ես տատանվում էի. վախենում էի ստանձնել  
այդպիսի մի պատասխանատու և ծանր պաշտօն,  
մանաւանդ Ս. Մանդինեանի պէս յալտնի մանկա-  
վարժի տեսչութիւնից յետով, թէև գործելու մեծ  
եռանդ էի զգում:

Ես խնդրեցի ինձ ժամանակ տալ մի օր:

Ես գնացի խորհրդակցելու ընկերներիս հետ:  
Յովսէփ Տէր Մովսէսեանը, յայտնի մեր շրջանում  
«սիրելի Օսինկա» անունով, որդին յայտնի Տէր  
Բարսեղ քահանալի, ուսանող Պետրովսկի երկրա-  
գործական ճեմարանի, թունդ ազգասէր, սկզբում

ընդդիմացաւ և իր անկեղծութեամբ՝ խորհուրդ  
ըլ տուեց ինձ, ասելով որ ալդպիսի քայլը կարող  
են մեկնել անհամեստութեամբ։ «Ի՞նչ կասեն մար-  
դիկ, ասաց նա, երբ իմանան, որ Դ. Աղայեանցի  
պէս մի փորձված մանկավարժի տեղ, տեսուչ է  
ընտրվել մի անվործ ուսանող և երիտասարդ»։

Այդ միջոցին ներս մտաւ Դ. Աղայեանցը, որ  
եկել էր Օսինկալի մօտ՝ խնդրելու նրան համոզել  
ինձ, իմանալով, որ նա, իբրև իմ մտերիմ և սիրելի  
ընկեր, ինձ վրա մեծ ազգեցութիւն ունի։ Եւ հա-  
զորդեցի Աղայեանցին Օսինկալի կարծիքը, բայց  
երբ Աղայեանցը իւր խրոխտ և համոզող ձայնով  
առաջ բերեց իր պատճառաբանութիւնները, Օսին-  
կան գառնալով ինձ ասաց. — ալժմ ես տեսնում եմ,  
սիրելի Համբարձում, որ դու պարտաւոր ես ըն-  
դունել առաջարկը։

Նոյն խորհուրդը տուին ինձ և բժ. Մարգար  
Առատամեանցը և իմ ընկեր ուսանող Գր. Իւզ-  
բաշեանը։

Ես որոշեցի ընդունել առաջարկը, միայն մի  
պայման դրի Աղայեանցին, երբ ես ընտրվեմ և  
հաստատվեմ տեսուչ, ես պէտքէ պաշտօնապէս  
առաջարկեմ՝ նշանակել նրան իմ օգնական և նա  
պէտքէ ստանձնէ ամբողջովին մանկավարժական  
մասի ղեկավարութիւնը։

Աղայեանցը համաձայնեց։

Հոգաբարձութիւնը ընտրեց ինձ տեսուչ թե-

մական և օրիորդական դպրոցների միաձայն. ըլ  
հակառակեց Ալվագեան Կարապետ վարդապետը  
և առաջարկեց եմ ընտրութիւնը ի հաստատութիւն  
կաթողիկոսի առաջնորդ Անդրէաս արքեպիսկոպոսի  
միջոցով:

Անդրէաս արքեպիսկոպոսը գեռ պաշտօնական  
առաջադրութիւնը չստացած, եջմիածնից շնորհա-  
ւորեց հեռագրով ընտրութիւնս:

Չանցաւ մի ամիս և Գէորգ IV կաթողիկոսը  
կոնդակով հաստատեց ինձ տեսչական պաշտօնի  
մէջ:

Պէտքէ ասեմ, որ Անդրէաս արքեպիսկոպոսը  
ճանաչում էր ինձ Թափրիզից, իսկ Գէորգ IV  
կաթողիկոսը նոյնպէս ճանաչում էր ինձ, որովհե-  
տեւ ես Մանկունի եպիսկոպոսի միջոցով Թափրի-  
զից գրագրութիւն էի սկսել՝ Պարսկաստանում  
հայոց Սահմանագրութիւն հաստատելու, թիւր-  
քահայոց ստհմանագրութեան նման:

Ես եռանդով ձեռնարկեցի նոր պաշտօնիս:  
Աղալեանցի աջակցութեամբ վերջնականապէս կազ-  
մեցի ուսուցչական խումբը, իբրև նոր ու-  
սուցիչներ հրաւիրվեցին 1) Բժիշկ Մարգա-  
րէ Առստամեանցը, որ խոստացաւ ձրիաբար աւան-  
դել վերջին (IV դասարանում թեմական դպրո-  
ցը բազկացած էր ալդ ժամանակ 3 պատրաստա-  
կան և 4 հիմնական դասարաններից) բնագիտու-  
թիւն և առողջապահութիւն 2) Գալուստ Մախ-  
մուրեան և 3) Միհալէլ Յարութիւնեան, — ուսա-

նողներ, որոնք միջոցներ չունենալով շարունակել իրանց բարձր ուսումը, որոշել էին մնալ հալթենիքում մի երկու տարի, պարապել ուսուցչութեամբ և մի քիչ դրամ ձեռք բերել: Եւ ուսուցչական խումբը վերջնականապէս կազմվեց այսպէս 1) Հ. Առաքելեան տեսուչ և 8 դաս պատմութիւնից, 2) Դ. Աղայեանց - օգնական տեսչի և ուսուցիչ հայերէնի, 3) Ալէքսան Յովհաննիսեան, 4) Յակոբ Խօջամիրեան, 5) Սիմէոն Հախումեան, 6) Նիկողայոս Տէր Աւետիքեան (ալժմ վարդապետ), 7) Կարապետ Էդիլիսանեան, 8) Սամուէլ Գիւլզադեան, 9) Բժիշկ Մարգար Առստամեանց, 10) Գաբրիէլ Ղուլիքեխայեան, 11) Գրիգոր վարժապետ, 12) Ներսէս Շահլամեան, 13) Յովհաննէս Իշխանեան, 14) Գալուստ Մախմուրեան, 15) Միքայէլ Յարութիւնեան, 16) օրիորդ Մովսիսեան, 17) Զառի բաջի (կարի և ձեր ու ձեռազործի վարժուհի) և երկու այլ վարժուհիներ և օգնականներ, որոնց անունները ալժմ չեմ լիշում: Որքոն լիշում եմ ամբողջ ուսուցչական խումբը թեմական և օրիորդական դպրոցների համար բաղկացած էր 20 հոգուց:

Խումբը, բացի Աղայեանից և Գիւլզադեանից, բաղկացած էր երիտասարդներից, լցված դադափարական ձգտումներով. ծառայել հայ ժողովրդի վերածնութեան համար: Աղայեանցն ևս գլուխվում էր իր գործունէութեան ամենաեռանդուն

շրջանին մէջ և հալ լեզուի ուսուցման իր նոր մէթօդով, որ հակադրում էր Ս. Մանդինեանի մտցրած մէթօդին, յոյս ունէր հէնց ալդ տարի պատրաստել թեմի ծխական դպրոցների համար ուսուցիչներ և վարժուհիներ։ Թեմական տեսուչ Տէր-Գրիգորեանը շարունակ պնդում էր, որ մեր բոլոր ջանքերը պէտքէ ուղղված լինեն տալ իրան առաջիկայ տարին 10—15 ուսուցիչներ և վարժուհիներ։ Աղալեանցն արգէն թեմական դպրոցի վերջին (17) գասարանի աշակերտներին ստիպում էր շարաժը. մի քանի անգամ փորձնական դասեր տալ պատրաստական գասարաններում։

Ամբողջ խմբի մէջ տիրում էր մեծ համերշխութիւն. ամենքն եռանդով գործում էին. ևս հետամուտ էի խիստ զիսցիպլինա պահպանել ամբողջ դպրոցի մէջ. թէ ուսուցիչների և թէ աշակերտների վերաբերմամբ։ Ես մի անգամ, ստիպված այդ կարգամահութիւնից, հակառակ իմ ընկերական մտերիմ յարաբերութիւնների, քիչ էր մնացել արձակէի ուսուցչական պաշտօնից Սիմէօն Հախումեանին, որ ջրօրհնէքի տօների առիթով 15 օրվայ արձակուրդ էր խնդրել Թիֆլիս զնալու և սակայն մնաց ալդ տեղ մի ամիս. նրա դասերը ես էի տալիս, բայց նրա անճշտապահութիւնը պատժելու համար, զրկեցի նրան մի ամսվալ ոռճիկից և յայտնեցի իրան, որ եթէ անմիջապէս չը վերադառնալ, կարձակվի պաշտօնից։ Եւ

երբ որոշված օրը գալով դպրոց, տեսալ, որ Ա. Հախումեանը գեռ չէ եկել, անմիջապէս պատուիրեցի քարտուղարին կազմել արձանագրութիւն նրա արձակման մասին, բայց մի երկու ժամից յետով Հախումեանը եկաւ և խնդիրը փակվեց, թէն մի ամսվալ ոռճկից զրկվեց յօդուտ դպրոցի:

Պէտքէ ասեմ, որ այդ մի տարվայ (1880—81 ուսումն. տ.) իմ ինչպէս և իմ համագործակից ուսուցչական խմբի գործունէութիւնը կը մնայ անջնջելի իմ լիշտութեան մէջ: Մենք գործում էինք և զպրոցից դուրս շարունակ ժողովներ էինք ունենում իմ տանը, կամ բժ. Մ. Առստամեանցի և կամ Պ. Աղայեանցի ու «Թեմականի» մօտ, ծրագիրներ էինք երկնում, վիճաբանում, յաճախ նոյն իսկ սուր կերպարանքով, ազգային և հասարակական զանազան խնդիրների մասին, մի խօսքով մենք ապրում էինք գաղափարական կեսանքով, կարծում էինք, որ ընդունակ ենք սարեր տեղահան անել և կարծանել ու ոչնչացնել մեր առաջ կանգնող խոչընդուները:

Երիտասարդական և իդէալական երջանիկ և քաղը օրեր, որոնք կը մնան յաւէտ անդառնալի. . . :

Այդ գաղափարական գործունէութեան իրեւ գործնական հետևանք կարելի է նկատել այն, որ ես նոյն տարին (1880 թ. դեկտ.) հիմնեցի Շուշանական Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերու-

թեան անդրանիկ ճիւղը (ընկերութիւնը նոր էր բացել իր գործունեութիւնը Թիֆլիսում), իսկ Սիմեոն Հախումեանցի հետ ձեռնարկեցինք հրատարակել «Գործ» ամսագիրը, որի հենց առաջին համարը ենթարկվեց սեկվեստրի, գլխաւորապես իմ «Հողատիրութեան խնդիրը Անդրկովկասում» վերնագրով լոգուածի համար։ Մենք կազմեցինք և մի ընկերութիւն՝ թիւրքահայերին օգնելու համար, գրդած այն աղեխարշ գիմումներից, որ նգդիրից մեզ անում էր Հմայեակ վարդապետ Արշարունին։

Բայց դառնանք դալրոցին։

Հոկտեմբեր ամսին (1880 թ.) եջմիածնից եկաւ առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոսը, որին ընդունեցինք դալրոցում մեծ հանդեսով։ Ես, իրեւ տեսուչ, ամբողջ դպրոցի և հոգաբարձութեան կողմից մի մեծ ճառով ողջունեցի նրա գալուստը։ Առաջնորդը նոյնպես մի երկար ճառ արտասանեց, խոստանալով ամեն տեսակ աջակցութիւն ցոլց տալ։

Պէտքէ ասեմ, որ Անդրեաս արքեպիսկոպոսը շատ լաւ, կօրբեկտ և բարեացակամ վերաբերմունք ցոլց տուեց ամբողջ ժամանակ գէպի մեր խումբը։ Հոգաբարձութիւնը չէր կամենում ինձ տեսչիս, ճանչել իրեւ անդամ իր կազմի, համահաւասար իրաւունքով, ես բողոքեցի գրա գէմ և Անդրեաս արքեպիսկոպոսը ոյժ տուեց իմ բողոքին և ստիպեց հոգաբարձութեան՝ ճանաչել տեսչին միշտ համահաւասար անդամ հոգաբարձութան։

Դպրոցը զուրկ էր թէ ֆիզիքական—բնագիտական կարինետից և թէ աշակերտական գրադարանից։ Ես աշխատեցի լրացնել այդ թերութիւնները, թէ հոգաբարձութիւնը շատ ժլատութեամբ էր բաց թողնում գումարներ։

Ուսուցչական ժողովների ժամանակ, երբ քննվում էին զուտ մանկավարժական հարցեր, ես նախագահութիւնը թողնում էի Աղալեանցին, բայց լաճախ ստիպված էի լինում միջամտել, որովհետեւ Աղալեանցը դկիտատօրական գիրք էր բռնում, երբ հակառակում էին իրան։

1882 թ. ապրիլին, թէ մայիսին, լու չեմ լիշում, Նուշի եկաւ Կովկասի նոր կառավարչապետիշխան Գոնգուկով՝ Կօրսակովը։ Ես գնացել էի Դարաբաղի բէգերի հետ միասին նրան ընդ առաջ մինչև Խանի բաղը. ալդտեղ, երբ ներկալացաւ և նա իմացաւ, որ թեմական և օրիորդական գպրոցների տեսուչն եմ, լալտնեց, թէ կը գամ ալցելելու ձեր գպրոցները։ Եւ, լիրաւի, երկրորդ օրը իմաց տուին, որ պէտքէ գտն ալցելելու։ Ես չը գիտէի, թէ առաջ որ գպրոցն է գալու, օրիորդաց թէ թեմական, ուստի Աղալեանցին նշանակեցի օրիորդական գպրոցում ընդունելու, իսկ ես պատրաստվեցի ընդունել թեմական գպրոցում։ մի և նոյն ժամանակ առաջնորդի համար պէտքէ թարգմանի պաշտօն կատարէի։

Դեռ նախորդ օրը Անդրէաս արքեպիսկոպոսը

և ես ներկայացանք իշխոն կառավարչութեաին  
Ղարաբաղի խանի աղջկայ տանը, ուր նա իշեա-  
նել էր: Ալդատեղ Անդրէաս արքեպիսկոպոսը տր-  
տասանեց հայերէն մի ճառ, որ պատրաստել էի  
ես և որ ռուսերէն թարգմանեցի իշխանին: Ալդ  
ճառի մէջ արքեպիսկոպոսը ընդհանուր գծերով  
շեշտեց, թէ ինչ է ակնկալում ընդհանրապէս  
երկիրը և ի մասնաւորի հայ ժողովուրդը նոր կա-  
ռավարչապետից: Դոնդուկով-Կօրսակով շնորհակա-  
լութիւն յայտնեց և խնդրեց գրաւոր տալ իրան  
արքեպիսկոպոսի ճառի թարգմանութիւնը, որ և  
նոյն օրն և եթ ռւզարկեցի իրան: Նա, առհասա-  
րակ, լաւ տրամադրված էր:

Դ. Ալդայեանցը գժուարանում էր ինքն ըն-  
դունել իշխանին օրիորդաց գպրոցում, եթէ նա  
իր ալցելութիւնը ալդատեղից սկսէր: «Ես չեմ կա-  
րող, ասաց նա, ռուսերէն ողջոյնի ճառ արտա-  
սանել, իսկ հայերէն արտասանել՝ անլարմար կը  
լինի. իշխանը կարող է կարծել, որ գպրոցում  
ռուսաց լեզուի ռւսուցիչ չկալ»:

Ալդ գժուարութիւնը հարթելու համար ես  
խնդրեցի Շուշու գաւառապետ Գուբրօվսկուն, որ  
լաւ ծանօթ էր ինձ, այնպէս կարգադրել իշխանի  
գալուստը, որ առաջինը ալցելէ թեմական գպրո-  
ցը և առաջնորդին և ապա օրիորդաց գպրոցը:  
Ալդպէս էլ եղաւ: Իշխանը եկաւ առաջ թեմական  
գպրոցը և կանխապէս կամեցաւ ալցելութիւն

տալ Անդրէաս արքեպիսկոպոսին, որ ընդունեց  
նրան իր բնակարանի մուտքում, իսկ մեծ գոնի  
մուտքում ընդունել էր նրան ամբողջ հոգևորա-  
կանութիւնը: Երբ մտաւ առաջնորդարանի դահ-  
լիճը, ժեմական դպրոցի երգեցիկ խումբը՝ Շահ-  
լամեանի զեկավարութեամբ, երգեց հայերէն  
ոռուսական օրհներգը: Իշխանը ամբողջ ժամանակ  
կանգնած մնաց գլուխը բաց: Ես նկատեցի, որ  
նրա գէմքի վրա դժգոհութեան նշաններ կային,  
բայց նրանք անհետացան, երբ օրհներգի աւար-  
տումից յետու խումբը երգեց ոռուսերէն «Եօյէ,  
Царя Храни»:

Առաջնորդի մօտ սուրճով հեւրասիրվելուց  
լետոյ գնացինք դպրոց: Ալդտեղ ես ընդունեցի  
նրան ուսուցչական խմբի և հոգաբարձութեան  
հետ միասին, արտասանեցի ողջոյնի մի ճառ, որին  
նա շնորհակալութիւն յայտնեց: Նա ցանկացաւ  
պտտել դասարանները, հետաքրքրվեց իմանալ ինչ  
ծաւալով է անցնվում ոռուսերէն լեզուն, պատ-  
մութիւնը և աշխարհագրութիւնը, կամեցտւ-  
տեսնել դասագրքերը և, ըստ երեսոյթին, գոհ  
մնաց իր ալցելութիւնից: Ալդտեղից միասին գնա-  
ցինք օրիորդական դպրոցը սոտքով (մօտիկ էր):  
Ալդտեղ ես ներկայացրի իշխանին իմ օգնական  
Աղայեանցին և վարժուհիներին, որոնց թւում և  
զարաբաղցու կնոջ տարագով՝ Զառի բաջուն. որի  
մախմարէ մինթանան, ալ մետաքսէ շապիկը եր

ոսկէ կօճակներով և զլիսի ճակատանոցը՝ բաւական ուշադրութիւն գրաւեց։ Երբ ցոյց տուինք Զառի բաջու հիանալի ասղենկար և ոսկեհիւս ձեռագործները, նաև հիացաւ։ Ի՞ գասարանի աշակերտուհիները—և ալդ տարի աւարտող աշակերտուհիները Շուշու օրիսրդների ծաղիկն էին կազմում—շատ գեղեցիկ և անսխալ պատասխաններ տուին և իշխանը շատ գոհ մնաց ու հրամայեց ուղարկել քաղցրաւենիք։

Նոյն օրը կէսօրից յետու, իշխանի անունով Անդրէսս արքեպիսկոպոսը և ես հրաւիրվեցինք ճաշի և ես գարձեալ թարգմանի պաշտօն կատարեցի։ Ճաշը անցաւ շատ զուարթ և ուրախ։

Աննկատելի կերպով եռանդուն գործունէութեան մէջ, վրա հասաւ մայիսը։ Մօտեցան քննութիւնները։ Այդ տարի, ինչպէս ասացի, օրիսրդական գպրոցը պէտքէ տար իր անդրանիկ պտուղը։ Շուշու ամենալաւ և արիստօկրատիք ընտանիքների աղջիկները այդտեղ էին գաստիարակվում, մինչ մի քանի տարի առաջ ազգային օրիսրդական գպրոցը արհամարված էր։ Այդ տարի աւարտում էին իրանց ուսումը օրիսրդներ՝ Տէկատերինէ Պոլուխաննեան (ապա՝ տ. Բահաթըրեան), Նունէ Մարդաննեան (տ. Եարամիշեան), Մալկօ Բահաթըրեան (տ. Գաֆիեան), Հեղինէ Գանջեցեան (տ. Աղամալեան), Հելսելիս Գանջեցեան (տ. Բաղդա-

սարեան—որ ամուսնութիւնից յետով շուտով մեռաւ), Հեղինէ Առաքելեան (տ. Առստամեան), Ուկեհատ Թափրիգեան (տ. Մուրացան) և այլք, որոնց անունները այժմ չեմ լիշում: Սրանք ամենքը գերազանց կերպով մւարտեցին իրանց ուսումը և ես մեծ հաճուքով ստորագրեցի նրանց դիպլօմները: Դրանցից մի քանիսը եղան հասարակական գործիչներ և նոյնիսկ գրականագէտ:

Թեմական գլուխում այդ տարի աւարտում էին Փարսադան Տէր-Մովսէսեան (այժմ Մեսրոպ եպիսկոպոս), Վահան Դատեան (այժմ Խաչիկ վարդապետ), Սարգիս Ղուլիքեսայեան, Սնդրէս Սքրահամեան, Բագրատ Տէր - Սահակեան (այս երեքն ես ուսուցիչներ դարձան), և այլք, որոնց անունները նոյնպէս մոռացել եմ: Դրանց վկայականներն ես ես՝ տուի, յորդորելով շարունակել ուսումը: Երկուսը՝ Փարսադանը և Բագրատը հետեւեցին խորհրդիս, գնացին մտան Ներսէսեան դպրոցը (իսկ Փարսադան Տէր-Մովսէսեանը այդտեղից էլ գնաց Դօքատ և բարձր ուսումն ստացաւ, լինելով Կ. Հ. Բարեգործ. ընկերութեան թոշակաւոր, իսկ մնացածները հետեւեցին Պ. Աղալեանցի խորհրդին՝ անմիջապէս նուիրվել՝ ուսուցական գործունէութեան:

Երկու հպիգօտներ դեռ թարմ են մնում իմ լիշողութեան մէջ այդ ժամանակից:

Մի անգամ, թեմական գլուխի վերջին դա-

ստրանում ես պարապում էի բացակալ Ա. Հայուոմեանի տեղ հայերէն լեզուից: Կամենալով ստուգել, թէ աւարտող աշակերտները որքան առաջադիմել են հայոց լեզուի և մանաւանդ շարադրութիւն գրելուն մէջ, ես առաջարկեցի գրել տեղնուատեղն մի շարադրութիւն և իբրև բնաբան տուի հետևեալ ասացուածը «Հարք կերին զազոխն և որդոց ատամունք առին»: Զը գիտեմ ինչու ալդ ասացուածը լանկարծ մտքիս եկաւ: Ալդ գասին եկել էր ներկայ լինելու «Թեմականը»: Աշակերտներից մէկը լայտնեց, թէ չը գիտէ ինչ է «ազոխը»: Ես լանկարծակի եկալ, մոռացել էի ալդ բառի նշանակութիւնը, գիտէի, որ նո նշանակում է ինչ որ մի թթու բան, բայց ինչպէս անուանել աշխարհաբար, չէի լիշում, կամենալով ժամանակ շահել, մինչեւ որ կը մտարերեմ, ես սկսեցի միւս աշակերտներին հարցնել. «Գու էլ չը գիտես, Փարսպան, գու էլ չը գիտես, Վահան, Սարգիս և այլն»: Թուրս եկաւ, որ ոչ ոք չը գիտէ, «Լաւ, ասացի ես, ես ձեզ կօգնեմ. ազոխը թթու բան է, ուտելիք է. գէ, լիշեցէք»: Պարձեալ ոչ ոք չիմացաւ:

«Թեմականը» հասկացաւ, որ ես ևս կամ չը գիտեմ կամ մոռացել եմ աշխարհաբար անունը, քմծիծաղ տուեց և սկսեց օգնել: «Տղերք, ասաց նա, երբեմն բօղբաշի մէջ ինչ թթու բան են ձգում»: Մինը ասաց. «սերկեիլ», միւսը «նուռն»,

«ալբուխարա»: Բայց ես արդէն մտաբերեցի: «Դէ լաւ, ասացի, ես ձեզ կասեմ. «զօրա, ժուռ»: Եւ պատուիրեցի, որ ամեն մինը բացատրէ այդ ասացուածի փիլիսոփոյական իմաստը:

Աշակերտներից մինը՝ Վահան Դադեան (Խաչիկ վարդապետ) շատ չորաճճին էր և «օլինըազ», ինչպէս ասում են: Մի անգամ, երբ տեսչական սենեակում նստած էի, վերակացուն ներս վազեց և ասաց. «պարոն տեսուչ, Վահան Դադեանը ուշաթափ է եղել»: Ես անմիջապէս վազեցի դասարան և տեսալ Վահանին ուշաթափ դրութեան մէջ, գալկացած և խռովոտ հնչիւններ արձակելիս: Բարեբաղդաբար բժ. Առստամեանը դպրոցումն էր. կանչել տուի, իսկոյն եկաւ: Մինչ այդ մենք ջուր էինք սրսկում, որ ուշի բերենք, բայց զուր: Բժիշկը փոխադրել տուեց տեսչանոցը, սկսեց զըննել, ջուր սրսկել, նաշտարի սպիրտ գէմ անել քըթին և այն: Յանկարծ, նա պոռաց. «այ, դու, անպիտան կօմեգիտանդ, վեր կաց, բաւական է, ինչ խաղ ես խաղում»: Բանից դուրս եկաւ, որ Վահանը դասը չիմանալով և կարծելով, որ այդ օր ուսուցիչը չի հարցնի իրան, իսկ երբ սա հարցը ել էր, դիմել էր այդ միջոցին՝ խուսափելու համար և այդպիսի մեծ ճարպիկութեամբ կեղծել էր ուշաթափութիւն: . . . Ի հարկէ, Վահանը կրեց արժանաւոր պատիժ, բայց քննութիւններն շատ լաւ տուեց և ստացաւ դիպլօմ:

Վերջանում էր ուսումնական տարին և եռ  
արդէն խօսում էի ուսուցիչների հետ մտածել  
նոր տեսչի ընտրութեան մասին և առաջարկում  
էի խնդրել հոգաբարձութեան ընտրել Պ. Աղայ-  
եանցին տեսուչ: Նրանք խնդրում էին, ինքն Ա-  
զայեանցն ես, որ ես մնամ և շարունակեմ: Ես  
բացէբաց մերժեցի, որովհետեւ ընտանեկան և  
անձնական դործերս թոյլ չէին տալիս: Սակայն  
ուսուցիչներից մի քանիսը՝ Սիմէօն Հախումեան,  
Ն. Տէն-Աւետիքեան, Կ. Էդիլխանեան և այլք, դէմ  
էին Աղայեանցին, ասելով, որ նա բռնապետական  
ձգտումներ ունի: Դէմ էր և Անդրէաս արքեպիս-  
կոպոսը, որի հետ ես խօսեցի. նա ասաց, թէ կա-  
թողիկոսը չի հաստատի Աղայեանցին: Սակայն ես  
այն համոզումն ունէի, թէ Աղայեանցը ամենա-  
լարմար աեսչոցուն է, ուստի և սկսեցի պնդել,  
համոզել Անդրէաս արքեպիսկոպոսին և հոգաբար-  
ձութեան՝ ընտրել նրան տեսուչ: Առաջնորդը իր  
կողմից պնդում էր, որ ես շարունակեմ այսու-  
հետեւ ոռճկով: Ես ասացի, որ խնդիրը ոռճկի  
մասին չէ, այլ մերժում եմ այն պատճառով, որ  
գտնում եմ, թէ անլարմար է, երբ թեմական  
գպրոցի տեսուչը մասնագէտ-մանկավարժ չէ:

Երկու օրից յետոյ Անդրէաս արքեպիսկոպոսը  
կանչեց ինձ և լայտնեց, թէ ինքը գտել է մի լաւ-  
ելք. գպրոցը ինձ միջոց կը տալ գնալ Գերմանիա  
և Յ տարի ուսանել մանկավարժութիւն. պաշտօ-

նապէս ես կը մնամ տեսուչ, իսկ դպրոցը կը կառավարի Աղայեանցը, իբրև իմ օգնական։ Երեք տարուց լետոյ ես պէտքէ գոնէ Յ տարի տեսչութիւն անեմ, տարեկան 1200 ը. ոռոճիկով։

Ես վճռապէս մերժեցի ալդ առաջարկը և պնդեցի իմ առաջարկի վրա։ Առաջնորդը զիջեց և ասաց. «Թու գիտես, եթէ գրանից որևէ չարիք կամ վնաս ծագի, թող ծանրանալ քո խղճմտանքի վրա։ Նա չէր համակրում Աղայեանցին։

Երբ ալդ լուրը տարածվեց, որ ես Աղայեանցին եմ առաջարկում իբրև աեսուչ, ուսուցիչների մեծ մասն եկաւ ինձ մօտ և խնդրեց, որ ես գոնէ Աղայեանից տղնիւ խօսք առնեմ, որ նա ներկայ խումբը կը թողնէ անփոփոխ։ Նրանք ինձ լայտնեցին, որ Աղայեանցը մտադիր է հեռացնել Ս. Հախումեանին, Ն. Տէր-Աւետիքեանին, Կ. Էդիլիսանեանին և, կարծեմ, նաև Յ. Խօջամիրեանին և նրանց փոխարինել ալդ տարի աւարտող աշակերտներով (Ս. Ղուլիքելսալեան, Ա. Արբահամեան, Վահան Դագեան)։ Ես չը հաւատացի ալդ լուրերին և երբ Աղայեանցին տեսալ ու հարցը, նա ասաց, որ սխալ է, ալդպիսի բան չը կար։ Այն ժամանակ, ես լայտնեցի նրան, որ ինքը կը հաստատվի տեսուչ, միայն ինձ ազնիւ խօսք պէտք է տալ, որ ուսուցչական խմբից ոչ ոքի չի հեռացնի գոնէ առաջին երկու տարին։ Նա խօստացաւ և ազնիւ խօսք տուեց։ Եիամտված, ես

ևս միամտացրի ուսուցիչներին և ազնիւ խօսք տռւի,  
ոչ մի փոփոխութիւն չի լինի և պաշտօնապէս ա-  
ռաջարկեցի հոգաբարձութեան՝ ընտրել Պ. Աղայ-  
եանցին տեսուչ իրբե ձեռնհաս և հմուտ անձն:  
Ընտրութիւնը կատարվեց. առաջնորդը առաջարկեց  
կաթողիկոսին ի հաստատութիւն:

Ալդ միջոցին, յունիս և յուլիս ամիսներին,  
Նուշում տեղի ունեցաւ մի մեծ գէպք. բացվեց  
բէալական գպրոցը: Նոր նշանակված վերատեսուչ  
Նիւրլինզը, որի աշակերտն էի եղել ես, երբ ու-  
սանում էի Բագվի բէալական գպրոցում, չունե-  
նալով գեռ սպատրաստ ուսուցչական խումբ  
բացւող բէալական գպրոցի համար, հրաւիրեց ինձ  
օգնել իրան՝ քննութիւնների ժամանակ և ժամա-  
նակաւորապէս աւանդել ֆրանսերէն և աշխարհա-  
գրութիւն: Ես ընդունեցի առաջարկը: Երբ քննու-  
թիւնները կատարեցինք և վերջնականապէս պարզ-  
վեց, թէ քոնի աշակերտ կարող են ընդունվել  
(խնդրատունների թիւը 1000-ից անցնում էր, բայց  
կարելի էր ընդունել միայն 250 հոգի, որովհետե-  
ալդ տարի բացվում էին միայն 3 դասարան), կա-  
տարվեց բացման հանդիսաւոր ակտը, որի ժամա-  
նակ ես, թէ իրբե ներկայացուցիչ Պարաբաղի  
թեմական գպրոցի և Նուշու հայ հասարակութեան  
և թէ իրբե քարտուզար մանկավարժական ժողո-  
վի արտասանեցի մի ոռւսերէն ճառ ալն մասին,  
թէ ինչ տեսակ ուղղութիւն պէտք ունենալ բէա-

լական գպրոցը, եթէ կամենում է աեղական ժողովրդին և պետութեան օգտակար լինել և արժանաւոր քաղաքացիներ պատրաստել:

Զը գիտեմ ինչու գիրեկօր Նիւրլինգը ուղարկել էր այդ ճառը ուսումն. շրջանի հոգաբարձու Եանովսկուն, որ լանդիմանութիւն էր գրել նրան, թէ ինչու թոյլ է տուել այդպիսի մի արմտական ոճով արտասանած ճառ:

Ապա օգոստոսի վերջերին ես գնացի Թիֆլիս, մասնակցելու Հայոց Ա ընդհանուր Ուսուցչական Փողովին, իբրև պատգամաւոր Դարաբաղի թեմական գպրոցի: Թէև Ազայեանցի հաստատութեան կոնդակը դեռ չէր եկել, բայց ես լանձնեցի նրան գպրոցները և մեկնեցի:

Սեպտեմբերի սկզբին Թիֆլիսում լուր ստացաւ, որ Ազայեանցը հաստատվել է տեսչի պաշտօնում. բայց իր խստառաջը չէ կատարել. նա արձակել է Ա. Հախումեանին և ընկերներին և նրանց տեղ ուսուցիչ հրաւիրել նորաւարտ աշակերտներին:

Ինձ վրա ծանր տպաւորութիւն թողեց Ազայեանցի այդ վարժունքը. որ լետոյ պատճառ եղաւ և մեծ երկպառակութիւնների, այնպէս որ ինքն Ազայեանցը ստիպվեց մի տարուց լետոյ հրաժարական տալ և հեռանալ Շուշուց: Խումբն ես ցըվեց:

Կարող եմ ասել, սակայն, առանց համեստութեան դէմ մեղանչելու, որ 1880-81 ուսումն.

տարին, իմ, Աղալեանցի և ուսուցչական խմբի  
համերաշխ աշխատակցութիւնը ստեղծել էր մի  
այնպիսի գաղափարական մթնոլորդ, որի նմա-  
նը, գուցէ բնաւ չէ ունեցել Ղարաբաղի թեմա-  
կան գպրոցը:

Վերապրելով 33 տարի առաջ ունեցած լիշո-  
զութիւններով, ալսօր ես պէտքէ ցաւ լայտնեմ,  
որ գեռ 33 տարի առաջ նկատված թերութիւնը՝  
այն է թեմական գպրոցի ապահովութեան և նոր  
շինութեան խնդիրը մնում է անլուծելի:

Իցէ թէ, այս տարի, երբ տօնում ենք հան-  
գիսաւորապէս նրա 75-ամեալ գոյութեան լօբել-  
եանը, վերանան այդ թերութիւնները և այդ ար-  
դիւնաւէտ հաստատութիւնը գառնայ Ղարաբաղի  
հայութեան հաստատ և մշտական լուսի տաճարը,  
առանց երբէք վախ ունենալու, թէ մի օր կարող  
է պակասել այդ լուսը տարածող դամբարի ձե-  
թը. . . :

Հ. Ընալելեան

## ԴՊՐՈՑԵՎԱՆ ՅՈՒԾԵՐԻՑ

Տասնիններորդ դարի վերջին կիսում հայ գիւղացին դեռ շտա քիչ գաղափար ունէր ուսումնաբանի և ուսման մասին. և նա իր որդուն տւելի շուտ դաշտի ու ալգու գործն էր սովորեցնում և 17—18 տարեկան հաստկում ամուսնացնում, քանի մտածում ուսում տալու:

Աչքի էր ընկնում մի արտօնեալ գաս, որին միայն կարծես տւած էր ուսում առնելու իրաւունքն ու մենաշնորհը:

Դա գիւղական քահանալի, տանուտէրի, մասսամբ և խոջայի կամ վաշխառւի դասակարգն էր: Բայց ալգտեղ ևս պարտադիր չէր ուսումը, այլ կամովին: Եւ շատ անգամ այդ «արտօնեալ» դասակարգի զաւակները ոչնչով չէին տարբերում հասարակ գիւղականի զաւակներից: Հարկադրաբար—և անշուշտ կարծես հարկադրաբար՝ ուսում էր ստանում քահանալի այն որդին միայն, որը պէտք է պատրաստւէր ժառանգելու հօր քահանալութիւնը. խոջայի այն որդին, որի վրայ հայրն առանձին շնորհ ունէր ու նրան էր

Հաւատում իր հաշիւների սեն ու սպիտակը ջոկելու, կամ քաղաքում վաճառական դառնալու ժառանգականութիւնը:

Այդպէս չեն դատում, սակայն, մի կարգ խոջաներ ու վաշխառուներ: Նրանք շատ ել հաշւի ու մուրհակի երկրպագու չեին: Նրանց նշանաբանն էր. — գարնանը շլորին ծաղկեց՝ ալդ քեզ համար տարեգլուխ. տարին շաւու տւաւ, մէկ ել ծաղկեց՝ ալդ ել տարեգերջ: Պալման ունիս մէկի հետ՝ դրանով հաշւիր ժամանակդ. տարի ես ուզում հաշւել՝ ահա քեզ հաշիւ. . . փող ես շահով տախի՝ վերցրու մի փայտ, վրան գծեր քաշիր դանակով — հինգ, տասը, հարիւր՝ որքան կամենում ես և որքան, զիցուք, փաղ ես ուզում տալ մէկին և դիր փայտը մի լայտնի տեղ, մի պահարանում ու ժամանակին հանիր, փողդ ստաց. . . չե, հարկադրւած ես ստորագրութիւն դնելու՝ մի թղթի վրա՝ մատիդ ծալրը թաթախիր թանաքով ու դիր անւանդ առաջ, ել երբ կը համարձակւիս ուրանալ, որ ձեռքդ ալնոտեղ չե:

Այս մեռելութեան մասնել իր որդիներին ստկայն չեր ուզում հալրա: Նա ուզում էր և մտքումը զրել էր որդիներից որը հասակն առնի՝ անպատճառ քաղաք ուզարկի և ուսում տալ: Նա իր եղբայրներին շարունակ քարոզում էր ասելով ով կարդայ, նա մարդ ա: Եւ այս համոզումով էլ նա ուզում էր ինձ քաղաք ուզարկել և դպրոց տալ կարգալու:

Զէին համոզւում եղբայրները: — Մենք զիւ-  
զական մարդիկ ենք, ասում էին, մեզ ի՞նչ կը սա-  
զալ ուսումը: Զէ: Դու փախել ես գնացել Գան-  
ձասարաւ վանքում կարգացել՝ հերիք չէ, ուզում  
ես տղորցդ էլ քաղաք տանէս կարգացնես: Զենք  
ուզում:

Հայրս, սակայն, անլողգողդ էր իր խօսքին և  
ասաց.

— Զերն էլ կը տանենք, երբ մի փոքր մե-  
ծանան՝ նրանց էլ կը տանենք: Ուսումն այսու-  
հետեւ հարկաւոր է, էն հին ժամանակները գնաց,  
պէտքէ անպատճառ երեխորցն ուսում տանք:

— Զէ, որ չէ: Իմ երեխաս Երբ է հասնում,  
որ տանենք: Եդ ծախքերին մենք չենք կարող  
գէմ կենալ, ուզում ես՝ բաժանւիր մեզանից, յե-  
տոյ:

Ճար չեղաւ: Զուր էր աշխատում խեղճ մար-  
դը համոզել նրանց: Առաջարկութիւնը կտրուկ էր:  
— Նա կամ պիտի եղբայներից բաժանւէր՝ մեզ ու-  
սում տար, կամ պիտի մեզ զրկէր ուսումից և  
մնար անբաժան եղբայր:

Եւ նո գերակշռեց եղբայրներից բաժանւելը,  
քան իր խօսքից լետ դառնալը:

II

Ես արդէն աշակերտ էի թեմական գրպոցի:  
Հայրս ինձ տւել էր մի պալտառի տուն, քա-

զաքի վերին ծալբում, կազարմի տակ: Այնքան  
հեռու էր ուսումնարանից, որ մինչեւ տեղ հաս-  
նելու թուքու ցամաքում էր: Իսկ երբ լոգնած  
տուն էի հասնում և տեսնում, որ արդէն տանե-  
ցիք ճաշել են և ինձ համար մի երկու կտոր ցա-  
մաք հաց պահել, կամ՝ եթէ կերակուր էին եփել՝  
մի տման էլ սառած կերակուր, գեռ ճաշի չնրս-  
տած և մի երկու պատոս չկերած, հենց որ ձեռ-  
քը գէպի ջրի փարչն էի տանում՝ տանտիրոջս կաղ  
պառաւ քոյլը գալիս էր հացը վերցնում առաջիցս:

— Ի՞նչի՞ ես վերցնում. ասում էի:

— Մի անգամ չես դնում, ասում էր, մի  
կուժ ջուր բերելու . . .

Երբ երեկոյեան մի կէս ժամ աւել նստում  
էի գասս սովորելու, վեր էր կենում և փնթփըն-  
թալով ճրագը հանգցնում:

— Ինչո՞ւ ես հանգցնում, ասում էի:

— Որովհետեւ մի անգամ մի գրւանքայ նաւիժ  
չես առնում բերում քեզ համար գաս սովորելու:

Իսկ դիտէի որ հալրս տալիս էր ամեն ինչը:

Իմ երեսս չէր կտրում դիմագրել և վախում  
էի հօրս բան գրել այդ մասին: Որովհետեւ նա  
պայտառի հետ շատ սիրով էր, համարեա թէ եղ-  
բայրացած, և խելքս այնքան էր կտրում, որ եթէ  
հօրս լայանեմ կաղ պառաւի արարմունքը և նա  
գրի պայտառին՝ իմ բանս աւելի վատ կը լինի և  
վերջիվերջու թէ նրանց եղբայրութիւնը կը քանդւի

և թէ ես նրանց տանից զրկւելով՝ կը զրկւեմ ուսումնից:

Համակերպւեցալ դրութեանս հետ, հաշտւեցի... Տեսայ, որ պառաւը ձեռք չի քաշում ինձանից՝ ինչ անեմ, ասացի, կը գնամ ջուրը:

Պայտառի աշակերտ Սաքանը, որ ինձանից երեք չորս տարով մեծ էր, մի շատ բարեխիղճ ու պատւական տղայ էր: Ամեն երեկոյ ու առաւօտ գործից յետ գառնալոց կամ մինչև գործի գնալը պիտի գնար երկու կուժ ջուրը բերեր քաղքի հորերից, կամ դրսի ազրիւրներից, իսկ կիւրակի օրը եօթը կուժ ջուրը պարտաւորական էր նրա համար, որ պիտի բերեր Դարաբուլաղից և կարասը լցնէր՝ էն շաբաթը թէլի համար բանացնելու:

Այդ ժամանակները քաղաքի հորերից ջուր տանելը մի կրակ էր: Պիտի ինզրէիր, աղացէիր, մի ժամ մէկի գարւազում կուժն ուսիդ պոլնդնած սպասէիր, որ քեզ մի կուժ ջուր տային:

Իմ բախտն այնտեղ էր բան տւել, որ Սաքանի պէս «Ճրի ընկեր» ունէի: Նա տմեն գնալուց ինձ հետը տանում էր և օգնում էր լիսուն վայթուն գազ խորութեան հորերից սառինչով ջուր հանելու և կուժս լցնելու:

Հենց որ մի առաւօտ չէի գնում՝ կէսօրին հացս էլի շուտ էին հաւաքում առաջիցս, իսկ երեկոյեան չէի գնում՝ ճրագը՝ գեռ անկողին չըմտած՝ հանգնում էր պառաւը:

Իսկ ի՞նչ կարող էի անել ես մի ժամ առաւ-  
տօքը, մի ժամ իրիկունը ջրի ճանապարհին կորց-  
նելուց, ինչպէս, երբ և որքան ժամանակ կարող  
էի ունենալ դաս սովորելու:

Թերացայ. . . ու մի անգամ երբ աշխարհա-  
զրութեանս դասը լու չէի իմանում. (ախ որքան  
ես նեղւում ու տանջւում էի այն անիծեալ գե-  
տերի անուններն անգիր անելուց) ուսուցիչը պա-  
հանջեց որ գուրս գամ ու քարտեզի վրայ ցոյց  
տամ: Ես երկիւղիցս դողալով գուրս եկալ և գնա-  
ցի կանգնեցի քարտեզի առաջ: Գեռ ոչինչ չհարց-  
րած՝ ուսուցչի աչքն ընկաւ իմ բլուզի ուսերին  
և տեսնելով ծակւած, ծրորւած ու տակից սպի-  
տակ շապիկը երեալիս՝ հարցրեց.

— Ի՞նչ է ալդ, ալ տղակ. ի՞նչ զոռ է հա-  
սել ուսերիդ, որ ալդպէս ծակւել է:

Ես կարմրեցի ու ոչինչ չպատասխանեցի:

— Քեզ եմ հարցնում, ի՞նչ է ալդ:

Ես գարձեալ չպատասխանեցի: Ոչ թէ ուսուց-  
չին լայտնելու կամ չլայտնելու պատճառով էր, որ  
լուեցի, այլ ինքնասիրութիւնս թոյլ չտւեց, որ  
գասարանում, ընկերներիս առաջ, լայտնէի թէ՝  
տանտիրոջս համար ալնքան ջուր եմ կըել, որ  
ուսս ծակւել է:

Երբ ուսուցիչը երրորդ անգամ և բարկացած  
կըկնեց հարցը՝ ընկերներիցս մէկը նստած տեղից  
բարձր ձոյնով ասաց.

— Վարժապետ, նա ամեն օր տանտիրոջ համար ջուր է կրում։ Մեր հարեանի տանն է կենում, ես տեսել եմ։

Ինքնասիրութիւնս սաստիկ վիրաւորւեց ընկերոջս արած այդ մերկացումից, և կարմրելուց երեսս սկսեց ալրւել կրակի պէս։

Ուսուցիչը նկատելով, որ սաստիկ ալլազրել եմ, ասաց։

— Գնա՞ տեղդ նստիր։

### III

Դպրոցի վերակացուն՝ Յակօբջանը, որին նարաշաթ էլ էին կոչում, իր ընաւորութեամբ մի սլվիկ և շատ գիւրամատչելի անձնաւորութիւն էր աշակերտների համար։ Մանաւանդ նա աւելի սիրում էր զիւզացի աշակերտներին, որովհետեւ նրանք արձակուրդներին զիւզը գնալուց նրա համար ընծաներ էին ընթառ։ Հաւ, ճուտ, գաթա, տղանձ, չօրաժան, լորի և ալլն և նա ծնողների առաջ իրան ցոյց էր տալիս իրքի ուսումնարանի բոլոր կապ ու քշկոռն իր ձեռքին. . .

Դրա հակառակ աշակերտների համար համարեա թէ մի հրէշ էր դպրոցի ծառան, Մարդիապերը, որովհետեւ նա դասամիջոցներին ջուր էր տալիս միայն այն աշակերտներին, որոնք իրենց տուն գնացած ժամանակ նրան փող և ալլ ընծաներ էին բախչում, իսկ որոնք չէին տալիս՝ բոլէներով հերթի էր կանգնեցում և դռնովը մըտ-

նելուց այնպէս սըտին գալիս, որ աշակերտը, եթէ ետեռում մի ուրիշը զլինի կանգնած՝ մէջքի վրան պիտի գետնին զարնւի ու գլուխը տասը պատառ դառնալ. . . Զրի սովոն էր պատճառ, նա էլ չէր մեղաւոր: Երեք հարիւր աշակերտներին մենակ նա էր ջուր տալիս: Եսատ անգամ երկու երեք դասամիջոց անցնում էր և աշակերտը—ծարաւ աշակերտը դեռ Մարդի-ապօր քաղցր ուշադրութեանը չարժանացած: Հենց որ աչքին ատած մէկը մօտենում էր՝ իսկոյն բղաւում էր.

— Ելի եկեր, ոլեթա... ինչ պինդ ճակատ ունես:

Ես էլ եմ շատ նրա ըռունցքին ենթարկւել...

Ինձ հետ դասարանում պատահած գէպքի երկրորդ թէ երրորդ օրը Յակոբջան վերակացուն մտաւ դասարան և իրեն յատուկ բարձր ձայնով աչքերի տակը գողգողցնելով կանչեց.

— Տէր-Մարգսեան, նամակ կը գրես՝ հալրդ գոլ:

Ես լոեցի. իսկ ինձ մօտ նստած ընկերս աւելի քաղզաղկոտ գտնւեց նրան հարցնելու պատճառը:

— Քեզ ինչ, տեղդ նստիր. — բարկացաւ վերակացուն:

Ես նեղացալ, որ ընկերս ինձ կանիսեց. չիմացալ՝ շփոթւեմ վերակացւի յալտարարութեան վրայ, թէ ընկերիս միջամտութեան:

— Քեզ եմ ասում, այ տղալ, լսեցիր.—  
կըկնեց նա:

— Հա՛, վարժապետ լսեցի... բայց ինչի՞ համար է՝ չգիտե՞մ: Ասացի ես կամոց մօտենալով վերակացւին:

— Որ կը դալ՝ կիմանաս:

Ես կարծեցի թէ մի մեծ լանցանք եմ գործել և հօրս կանչում են ինձ պատժել տալու համար, և հարկադրւած եղալ վերակացւի եախից ձեռք չքաշել, մինչեւ չիմանամ պատճառը:

— Աշխարհագրութեան ուսուցիչդ էն օրը որ դաս է հարցը ել չես իմացել, լետով քեզ կանչել է գուրս և տեսել է ուսերդ ծակւած, գնացել է հալբիկին (Խորէն Ստեփանէին) ասել, նա էլ բարկացել է, թէ ինչո՞ւ, աշակերտը գրաստ է, որ ջուր է կրում, գրեցէք հալբը դալ: — Իմացար, դէ գրիր դալ:

— Լաւ, վարժապետ, բա որ գրեմ դալ, ախր ինձ այնաեղից կը հանի և տուն կը տանի, այնժամանակ ես ուսումից զրկւեմ:

— Չես զրկւիլ, ինչ ես լիմար լիմար գուստալիս, ինչո՞ւ, էլ տուն չկալ. հենց էն քոստնալբանդի տունն է էս քաղաքում:

Գրեցի հօրս, բայց առանց պատճառը լայտնելու:

Դասարանում ալ ես գողանիք չէր, որ ես ջրկիր եմ և ուսս կուժը տարել է:

Զարաճճի ընկերներս, մանաւանդ քաղաքացի:

ները, ինձ ծաղրում էին՝ շրջան, արեալու կանչելով,  
որ նրանց հասկացողութեամբ թարգմանւում էր  
լիմար, տղէտ. . .

Իմ ինքնասիրութիւնը սաստիկ վիրաւորւում  
էր այդ բանից և իմ տեղ ուրիշը լինէր՝ նրանց  
անարգական վարմունքը չէր տանի ու կը թողնէր  
ուսումնարանը և կը փախչէր: Բայց այդ ես չէի  
անում, որովհետեւ սաստիկ սէր ունէի գէպի  
ուսումը:

Մի բան միայն, որ ինձ համար ուրախալի  
էր, այդ այն էր, որ ես փոքր տեղսկո աւելի լաւ  
էի լւանում Խորէն Ստեփանէի «Հայկական Աշ-  
խարհի» մամուլի տառերը, որն այդ ժամանակ  
տպւում էր դպրոցի տպարանում, քան ինձանից  
մեծ և քաղաքացի ընկերներու: Դրա համար էլ  
ինձ շատ զովում էր Տէր-Բալան, «Հայկական Աշ-  
խարհի» միակ շարօղն ու տպագրողը:

Մի անգամ, սակալն, մամուլը լւանալիս աչ-  
քիս ընկաւ լուսամուտի առաջ ԽրիՄԵԱՆ ՀԱՅ-  
ՌԻԿԻ «ԱՐԺԻՒ ՎԱՅԱՊՈՒԽԱԿԱՆԻ»-ի մի տետրակը  
և ես ուզեցալ վերցնել, բայց Տէր-Բալան նկատեց  
և ձեռքից առաւ, դլիքս խփեց, թէ ինչ ես անում,  
Հայրիկը (Ստեփանէն իրան հայրիկ էր կանչել տա-  
լիս) կիմանալ՝ քեզ կը սրատէի: — Ուզում եմ կարգալ  
և լետ տալ, ասացի: Չտւեց, և իմ մտքում շնոր-  
հակալ եղալ, որ նա ինձ դեռ զող շանւանեց և  
այդ մասին Ստեփանէին չգանգատւեց:

IV

Բնաւորութեամբ կրքոտ և սաստիկ դիւրա-  
րորբոք մի մարդ էր Խորէն Ստեփանէն և ես  
վախում էի թէ՝ հալրս գալուց ինձ չդնէր ձեռ-  
քին ու ասէր թէ՝ վեր առ տար, մենք ջրկիր ա-  
շակերտ չենք կարող պահել ուսումնարանում։

Աչքս ալդքան վախեցել էր։

Իսկ իմ վախն տւելի կըկնապատկւեց, երբ  
մի անգամ մի աշակերտի, հասարակ մի չարու-  
թեան համար վեր կոխել տւեց բոլոր աշակերտ-  
ների առաջ և զուցանելով այնպէս ճիպոտհարել  
տւեց, որ զոռոցի վրայ դպրոցի հոգաբարձուն  
հասնելով սաստիկ նեղտցաւ, թէ ինչ իրաւունք  
ունիս աշակերտին ծեծում ես։ — Իմ գործն է  
ասաց, վայրենիներ, գնացէք. . . Քիչ մնաց, որ  
տեսուչ ու հոգաբարձու իրաբ հետ ընդհարւէին,  
բայց հոգաբարձուն իմանալով նրա տաք բնաւո-  
րութիւնը՝ տւելի խոհեմ գտնւեց զուտ հեռանա-  
լու, քան կուի պատճառ գառնալու. . .

Նա առհասարակ չէր կարողանում հաշտւել  
այն մտրդկանց և իշխանաւորների հետ, որոնք  
խառնւում էին իր կարգադրութիւններին և իր  
խոռվկոտ բնաւորութեամբ շարունակ ընդհարաման  
մէջ էր լինում ժամանակի առաջնորդ Սարգիս ե-  
պիսկոպոս Զալալեանցի և հոգաբարձուների, նա-  
մանաւանդ հոգեորական դասի հետ. . .

Վերջապէս եկաւ հալրս և ինձ համար դատաստանի օրը պիտի բացւէր.

Ամենից առաջ նա իհարկէ տեսաւ Յակօբյան վերակացւին, իմացաւ իրոն բերել տալու պատճառը, յետոյ ներկայացաւ տեսչին:

— Դուք, վալրենաբարոյ զարաբաղցիներ, երեխան էք կարգացնում, թէ ջրկիրութիւն սովորցնում, — ասաց նա իր խրոխտ ձալնով հօրս տեսնելուց . . . Հանեցէք նրան ալգտեղից և տւէք մի կարգին տուն, ափսոս է, շնորհալի երեխայ է, թողէք կարգին ուսում առնի. . . զիւղացի տղաներ շատ չկան՝ մի քանիսը՝ այն էլ ալգպէս. . .

Վերջն ալնպէս մեզմացաւ Ստեփանէն, որ ասես այն տաք խօսող մարդը չլինէր և սկսեց խորհուրդներ տալ հօրս, թէ ինչպէս պէտք է պահպանել երեխալին, որ նա ուսումից յետ չմնալ:

Ի՞նչ ասէր հալրս: Իմ ծակւած ուսերը տեսնելով նա աւելի էր վիրաւորուել պայտառի տան վարմունքից: Եւ տեսչի մօտից գուրս զալով գնաց ուղիղ մեր երկու գիւղացի զինեվաճառ Պազարի խանութը:

— Պազի, ասաց, խանութիդ ետևում տեղ կը լինի երեխան բերեմ թօղնեմ ալգտեղ մնայ մինչեւ արձակուրդը. մի ամիս է մնացել, կը գալ տուն, սեպտեմբերին հեշտ է:

— Ինչու չէ, քեզ վեշքեաշ, եթէ յարմար ես տեսնում ես չեմ խնայում: Միայն թէ՝ կին չկայ,

եփող, թխող, լւացող, կարկատող չունեմ, մի քիչ  
գժւար է. բայց չեմ խնայում, խանութիւն ետեսում  
մի փոքր սենեակ կա՛ իրան լինի, ինչ ուզում է  
անի:

— Ամեն ինչ գիւղից կը քերեմ, կարձ ժա-  
մանակ է, մի կերպ կը կառավարւի. . . ինչ ա-  
նեմ, քննութիւներին մի ամիսէ մնացել, կիսատ  
թողնեմ վեր առնեմ գնամ տուն։ Զեմ տա-  
նել. մի կերպ պիտի անես. . .

— Համեցէք, խնդրեմ... ասում եմ, որ չեմ  
խնայում։

Տեղափոխվեցալ ալգտեղ։

Ազատ էի, գոնէ, համեմատաբար ազատ և  
աւելի լարմարութեան մէջ ինձ համար դաս սո-  
վորելու քան պատառի տանը, թէև ինձ մենակ  
անհանգստութիւն պատճառողը գինետան ամե-  
նօրեալ աղմուկն ու հասարակութեան տականքների  
արբեցողութիւնն ու զգւելի կեանքն էր։

Հնար չկար։ Սովորեցի աղմուկներին։ Բայց  
ուսումնարանում իմացան և ձալնը հասաւ Խորէն  
Ստեփանէին։

— Ալժմ էլ գինետան, ինչպէս կարելի է  
աշակերտը գինետան ապրէ. — գոռաց նա։

— Մի քանի օր է մնացել հալրիկ, խնդրեմ  
թոյլ տաք. . .

Նա գուցէ իմ խնդիրը չընդունէր և հարց  
դնէր՝ կամ գինետունը թողնելու կամ գպրոցը,

եթէ իր օրերը ևս համբած չլինեին դպրոցի տես-  
չութիւնից հրաժարւելու:

V

— Ապրիս տղաս, գիւղ գնալուց ընկերներիդ  
զրգուիր, որ գան ուսումնարան մտնեն. . . Մեր  
գիւղերը շատ խաւար են, ողորմելի դրութեան  
մէջ: Այս մեր Տէր-Ավշառին ասացի մի երկու վար-  
ժապետ գտիր՝ ուղարկենք գիւղը, գնան դպրոց  
բաց անեն, դաս տան: Գնաց, որտեղ մի կոտը  
ընկած խոջա կայ՝ վերցրեց բերաւ. տգէտ, ան-  
ուս... ոչ կարգալ գիտեն, ոչ գրել, աշխարհը արշար  
են կարգում, որուրց պարուց, մի բան էլ երեք հետ  
գիր կտպում. իսկ գրելը—Աստւած փրկէ ազատէ,  
ոչ չեն ու հօք տեղն են իմանում, ոչ ոչի ու բենի,  
ոչ էլ ինչն ու գինի:

Սլուպէս ասաց ինձ Ասրգիս եպիսկոպոս Զա-  
լալեանցը մի օր քննութեան ժամանակ, որ եկել  
էր մեր հայերէնի դասին ներկայ լինելու. . .

Ամառը գիւղում հայրս չէր կշտանում ամեն  
երեկոյ ինձ երգել տալուց իմ սովորած երգերը  
«Բամբ որոտան», «Հապա քաջազունք», «Մայր  
Արաքսի» և այլն և այլն, որոնք մեր գիւղի սո-  
րերն էին աղմկում և գիւղացոց նախանձը գըր-  
գուում:

Նա փառաւորւում էր և կարծես ուզում էր  
դրանով ցոյց տալ գիւղացոց՝ մանտաւնդ իր եղ-  
բայրներին, թէ որքան սիլուն բան է ուսումը:

Սեպտեմբերին ես մի նոր տան էի քաղա-

քում։ Հայրս ինձ հետ քաղաք ըերաւ ուսումնարան տալու նաև ինձանից փոքր եղբօրս՝ Խաչատուրին, իսկ քեռիս միացաւ հօրս գաղափարին, ուզարկելով մեզ հետ իր որդի Պանիէլին, որը մի շնորհալի գիւղական ուսուցիչ գարձաւ ապագայում։

Մանուկ հաստկի գառն փորձերն ինձ վարպետ էին գարձել և ես համ կերակուր էի պատրաստում, համ տուն պահում։ Սովորցել էի նաև Խաչատուրին ու Պանիէլին, որոնք ինձ օգնում էին տան գործում և ապրում էինք առանց զգալի գժւարութեան և ժամանակին հասնում մեր գասերին, մեր ուսումին։

Այդ տարւանից, ստկայն, չկային գպրացում ոչ խորէն վարդապետ Մտեփանէն, որ իր ոսւսերէն լեզւի գիտութեամբ ու գասաւութեամբ աշխարհ էր հիացնում, ոչ էլ լուսնի հայկարան Մազաքիտ Պլուզեանը, որ իր ոգեշունչ Եղիշէով հայրենասիրութեան կրակ էր վառում մեր սրտերում։

Մի բան միայն ուրախալի էր, որ մեր թւին տարէցտարի տւելանում էին գիւղական նոր աշակերտներ և մեր թեմական գպրացը գառնում էր գպրաց համայն թեմի հայութեան համար։ Իսկ քաղաքացի աշակերտները մեզ այլ ևս չվագի, որին խօսքերով չէին վիրաւորում, որովհետեւ գիւղացի տղաներն առհաստրակ շնորհալի էին, քան քաղաքացի և վերջիններս նրանցից աւելի շատ բան էին սովորում. . .

Միտսար

Յուշեր Ջուշու Թեմական դպրանոցի  
մասին.

(1885 – 1894)

Կուսանաց Անապատի լիակատար գասընթացը՝  
Սաղմոսն ու Ժամագիրքը երբ վերջացրի, մայրս  
մտցրեց ինձ «Հոգեորական շկոլը» 1885 թ., ուր  
պիտի սովորէի ձրի: Աշակերտների ահագին բազ-  
մութիւնը զարմանքիս տռաջին տռարկան եղաւ.  
որքան շատ էին: Որքան լիշում եմ բոլոր նա-  
խակրթաբաններն ու տռաջին դասարաննը զուգըն-  
թացներ ունէին: Թեմական Առաջնորդին լատկա-  
ցրուած ընակարանի սենեակներից երկուսն էլ դա-  
սարան էին գարձրել վերին լարկում: Եւ որովհե-  
տեւ Եւ Զ. դաստրաններ դեռ ևս չկալին, շեն-  
քը բաւականութիւն էր տալիս:

Հին, խարխուլ շինութիւն էր «Հոգեորական  
շկոլը», որ մի քանի տարին մի անգամ էր նորո-  
գութեան ենթարկւում: Սւալները թափթփուած,  
պատերը աններկ, լատակները երբէք ներկի երես  
չտեսած ու մաշուած: Թէ որքան անլարմար էր

ալդ շենքը դպրոցի համար, ալդ ակնյալտնի եղաւ, երբ տարիներ մեր աւարտելուց յետով դպրոցը նոր շենքի մէջ տեղափոխուեցաւ: Երկու կարճ միջանցք ուներ վերին և ներքին յարկերում. որոնց վրայ վեց դասարան էր բացւում, իսկ մնացած դասարանները դբանց միջով միայն կարելի էր մտնել: Եւ ահա զանգից յետով ներս գալուց կամ գուրս գնալուց թէ դասարաններում և թէ սանդուղքների վրայ ահագին իրարանցում էր առաջ գալիս, որը 10—15 րոպէ էր տեսում: Առաջին դասերին միջանցքների վրայ բացւող դասարանների դասերը միշտ խանգարում էին ուշացած աշակերտների և ուսուցիչների պատճառով: Նատ ուսուցիչներ արգելում էին ուշացածներին ներս մտնել:

Աշակերտները որոշ տարագ չունեին: Նստարանների վրայ նստած կտեսնեիք, թէ չուխաւոր, թէ արխալուզաւոր, թէ բլուզաւոր բոլոր գոյներով, փափախաւոր ու կտրտուզաւոր, քօշաւոր ու չաքմաւոր, տրխաւոր ու չուստաւոր: Մակար վարդապետին (յետով եպիսկոպոս), ժամանակի ծերունի կրօնուսուլցին, ալդ հանգամանքը մեծ յարմարութիւն էր տալիս աշակերտներին կարգի հրաւիրելու կամ դաս հարցնելու, որովհետեւ ազգանունները չգիտէր, կամ այնպէս աւելի յարմար էր.

— Էլ, ու չուխաւոր տղայ, ուղիղ նստիր.  
Կամ թէ՝

— Ել, կարմիր արխալուզաւոր տղալ, դասդպատմիր:

Հետաքրքրական էին այդ խալտարգետ մանուկները տօն կամ կիւրակի օրերին խմբով եկեղեցի գնալիս:

Քօշերի երկաթէ պալտերը անդադար հարուածներ էին տեղում փողոցների անձրեից լոկուած սալայտակին և հազար ու մի ձախներով ներդաշնակուամ աշակերտների դանդաղ և անկանոն ընթացքի հետ:

Լու չեմ լիշում ալգ ժամանակուայ ուսուցչական կազմը, գիտեմ միայն, որ շատ շատերը տեղացիներ էին՝ ճեմարանականներ, դպրոցաւարտներ, ներսիսեանտառարտներ, վերջիններս մի տեսակ միջին տեղ էին ըսնում ճեմարանականների և միւս գպրոցտարտների մէջ: Թերեւս բացի տեսչից, Զ. Իշխաննեանից, բարձր ուսման տէր ոչ ոք չկար: Առանձնապէս լու տպաւուրութիւնն է մնացել մտքում Գարբիէլ վարժապետ Նուլիքեխալետնի մասին, որ իմ հալերէնի և թուաբանութեան ուսուցիչն էր: Երկրորդ բաժանմունքում ալնպէս պարզ բացատրեց նու մեզ է-ի կանոնը, որ մենք հեշտութեամբ հասկացանք, որ երբ է հնչիւնը բառի փոփոխելիս ի-ի է փոփուամ, է է զրւում: Թուաբանութիւնն ալնպէս աշխոյժ էր աւանդում (այն ժամանակ ջահել էր), մանաւանդ մտքում հաշուելու գործողութիւնը: Ալդ

էր պատճառը, որ երբ նրան փոխադրում էին օ-  
շիորդաց գպրոց (այդ լաճախ էր պատահում երևի  
տեսուչների կամ հոգաբարձութեան քմահաճովքով)  
նու մնում էր էլի մեր լաւ բարեկամը և մենք  
միշտ ողջունում էինք իրար և ինքը ժպտում էր:  
Միշտ թուրմ կմնայ մեր լիշտութեան մէջ նաև  
Սամուէլ Գիւլզագեան, գեղագրութեան ուսուցիչը,  
որ լեռով նաև ֆրանսերէնի գասատու եղաւ բարձր  
գասարաններում: Համեստ էր նա, թոյլ բնաւո-  
րութեամբ, նուազ, բայց և լարգանք ներշնչող:  
Նա այնպէս խնամքով օրինակներ էր գրում տախ-  
տակի վրայ և իւրաքանչիւր օրինակ մի սիրուն,  
պատկերաւոր իրատ էր ներկալացնում, ըստ ե-  
րեսիթին իւր կազմած: Զեմ կարող չլիշել նրա  
«Բուխարու» պատմութիւնը: Ա. գասարանումն  
էինք: Ֆրանսերէնի մի կանոն էր բացատրում մեր  
ընկերներից մէկին: Սա իբրև թէ հասկանում էր,  
բայց կրկնելիս այնպիսի մի բացատրութիւն էր  
տալիս, որ ոլորտապտուտ ճանապարհներով աւելի  
ևս հեռուն էր գնում: Վերջապէս այդ սառն ու  
խոհուն մարդը բարկացաւ և այդ բարկութիւնը  
ալսպէս արտախայեց. «Այ տղայ, ես քեզ գուռը  
ցոյց եմ տալիս, որ ազատ ելնես, իսկ դու բու-  
խարու ծակն ես փնտում, որ գուրս գտոս»: Այդ  
արտախայտնութիւը մենք երբէք չէինք մոռանում:  
Ոյնուհետեւ չեմ կարող մոռանալ Գրիգոր Բաղր-  
եանին և Յակովի ճաղաբբէկեանին: Երկուսն էլ

բարեխիղն ու սրամիտ։ Առաջինը ամիսների օրերի  
թիւը մեր մտքում տպաւորելու համար այնպիսի  
մի միջոց հնարեց, որ մինչև այժմ էլ չեմ մո-  
ռանում և յաճախ նրան եմ գիմում։ «Ազ-լուն-սեպ-  
հոկ», ահա ինչ պէտք է ասել, երբ ուզում ենք  
իմանալ, թէ որ ամիսը քանի օր ունի։ Յիշուած  
չորս վանկանոց բառը ցոլց է տալիս 30 օր ունե-  
ցող ամիսների առաջին վանկերը։ Մնացածը բացի  
փետրուարից 31 օր ունեն։

Այսպէս, երբեմն մի սրամիտ բացատրութիւն  
տւելի մեծ նշանակութիւն է ունենում, քան մի  
քանի մանկավարժական կանոններ։

Առանձին հաճութեամբ եմ լիշում մեր գա-  
ստրանական առաջին զբուանքը։ Դաստիարակ Զո-  
նումեանը տարաւ մեզ քաղաքից դուրս գարնա-  
նալին մի սիրուն օր։ Ամեն մէկս տնից ուտելու  
համար բան էր վերցրել։ Իջանք «Եռշուան» աղ-  
բւրի գլխին։ Իւրաքանչիւրը, միասին խմբուած,  
իւր բերածն էր ուտում։ Մեծ աշակերտները հիւ-  
րասիրում էին ուսուցչին։ Մէկը գինի էլ էր քե-  
րել, իսկ բաժակ ծառալում էր ձուի կճեպը։ Ու-  
սուցիչը հոկում էր, որ ըոլորն էլ մի բան ուտեն  
և շատերին իր մօտն էր կանչում, երբ նկատում  
էր որ ուտելու բան չունին։ Խմբակցական  
կեանքի առաջին օրինակն էր, որ տեսնում էի-  
ես և ապրում և որքան լաւ էր։ Ուտելուց յետոյ  
աւելի ևս ազատ էինք թռչոտում։ Յաճախ պէտք

Ե զրօսանքներ կտղմակերպել խելացի ծրագրով և  
չսպասել, մինչեւ որ աշակերտներն իրենք պա-  
հանջ դնեն և ինքնազլուխ զբօսանքի գնան, ինչ-  
ովէս ականատես եմ եղել, երբ յետագալ ժամա-  
նակներում ուսուցիչ էի նոյն գպրոցում:

Երկու տարուց յետով, երբ ես Ա. դառարա-  
նումն էի, տեսուչն արգէն Զ. Խշիանեանը չէր,  
այլ Մովէս Սամուէլեան, (ալժմ քահանայ Ուու-  
սաստանի քաղաքներից մէկում), ինչպէս ասում  
էին բարձրագոյն ուսման տէր: Նա մոալլագէմ,  
բայց խոհուն ու ծանրտբարոյ մարդ էր: Խնչպէս  
երեսում էր, առաջին իսկ հայեացքից նկատել էր,  
որ աշակերտների բարքերը իրենց ծննդավալրից  
բնութեան պէս լեռ-քար է, ուստի հէնց սկսզրից  
ձեռք զարկեց բարուական ազգեցութեան ու խիստ  
կարգագահութեան: Ամեն կիւրակի և տօն օրերին  
աշակերտները եկեղեցի պիտի գնալին խմբովին  
գպրոցից: Քաղաքի չորս եկեղեցիներում շաբաթ  
երեկոները և կիւրակի ու տօն օրերը երգեցիկ խըմ-  
բերը պիտի երգէին: Երգեցիկ խմբի մէջ ընկնել,  
նշանակում էր գմբախտանալ: Տէր Գարեգինը՝  
երգեցողութեան ուսուցիչը, շաբաթական 2, 3 օր  
փորձերի էր կանչում ճաշերից յետով. շատերը  
տուն չէին գնում, լաւ իմանալով, որ 1 ժամից  
յետովնորից պիտի վերագառնան: Տեսուչն էլ մի կող-  
մից էր նեղում ալդ խեղճերին, ստիպելով, որ ե-  
կեղեցի գնալուց առաջ իւր բարուական զըուցներն

Ել լսեն։ Այդ զբոլցներին ներկալ էին լինում բոլոր աշակերտներն ու ուսուցիչները։ Այդ բարուական խրատների ու զբոլցների համար «Նոր-Դար» թերթը նրան մի թերթօնի մէջ հեգնաբար «աշխատհի վարդապետ» (ըշխարի վըրդապետ) էր անուանել։ Այնուամենայնիւ նա իւր զբոլցները մինչև վերջը տարաւ, իսկ թէ ինչ հետեանք ունեցաւ, չեմ կարող ասել։ Կարդապահութիւնը խիստ էր, թէ նա աւելի օրինակների միջոցով էր աշխատում ազգել։ Նրա օրով մտաւ զոյգ-զոյգ կանգնած դասարան մտնելու և ելնելու կարգը։ Կարգի նշանակութիւնը յաւ հասկացնելու համար, լիշում եմ, նա բերաւ հետեւեալ օրինակը՝ թատրոնում հրդեհ է ընկնում, բոլորն անկարգ դէպի դուռն են վազում և այնպէս դէմ առնում, որ անհնարին է լինում դուռը բանալ և բոլորն ալրւում են։ Ել այնուհետեւ ով անկարգ գուրս ու ներս կանէր. . . Կարդապահութիւնը խանգարելու համար էր, թէ մի այլ լուրջ պատճառով նա մի աշակերտ արձակեց։ Որքան սառն ու դաժան էր նա այդ ըսպէին։ Հաւաքուել էին դահլիճ աշակերտներն ու ուսուցիչները. տեսուչը խօսեց. «Ձեր ընկերներից մէկը այնպիսի մի գործ է կատարել, որի համար նրան այլ ևս այստեղ պահել չի կարելի։ Նա այսօր արձակում է և նրա պէս կարձակւեն նըրանք ևս, ովքեր չեն ճանաչիլ գպլացի կարգ ու կանոնը։ Դէ, ուրեմն, առ զըքերգ և գնա՞ս, դար-

ձաւ նա մի աշակերտի (ազգանունը չեմ տալիս). և շեշտակի նայեց նրա դէմքին: Աշակերտը տնցաւ հարեւան սենեակը, առաւ դրքերն ու քօշերը և դուրս գնաց, մինչ միւսները լուս ու խորհրդաւոր կերպով հետեւում էին: Այդ արձակուածն ալժմ Վարանդալի գիւղերից մէկում քահանալ է: Թերես կարծողները լինեն, թէ Սամուելեան կղերամիտ մէկն է եղել. չեմ կարծում, որովհետեւ նրա օրով լու հիմքերի վրայ են գրւում բնական զիտութիւնների դասերը: Ինքը տեսուչն էր դասատուն, աւանդում էր մեզ հանքարանութիւն և ամեն ինչ ցոլց էր տալիս փորձերով:

Սամուելեանին յաջորդումեն 2—թէ երեք ալլ տեսուչներ (կրկին Զ. Եշխունեան, Ե. Մադատեան), թեմական Առաջնորդ է գալիս Կարեալ. Այլազե ո՞ն, որի ջանքերով բացւում են Ե. և Զ. դասարաններ, մինչեւ որ տեսուչ է հրաւիրւում Լեռն Սարգսեան, երբ ես Ե. դասարանումն էի: Սրա օրով աւելանում է բարձրագոյն ուսման տէր ուսուցիչների թիւը (Ուսուաց լեզուի, մաթեմաթիկալի, բնագիտութեան, լնդհանուր պատմութեան): Կալին և ճեմարանաւարտներ, իսկ գպրացաւարտ միայն մէկն էր, գպրացաւարտ էին նաև վերակացուները: Կրօնուսոլցը նոյն Աղէքսանդր քահանալ Բաղդասարեանն էր (Մակար վարդապետից լետով), որ սիրում էր գրքերի ահագին կոլտերով դասարան դալ, բայց աշակերտին ոչինչ

չտալ, այլ բաւականանալ դասի կէսը կարգացնել  
տալով, իսկ մնացած կէսը անթուլատրելի անեկ-  
դուներ պատմելով, յաւակնութիւն ունենալով  
հանդերձ, թէ դրանով աւելի մեծ արդիւնք է  
տալիս: Երբեմն թուլ էր տալիս մեզ կամաց վի-  
ճարանել իրար հետ, ինքը չէր մասնակցում, այլ  
մի բան ծամում էր (միշտ): Մի օր ընկերներիցս  
մէկը՝ հիւրասիրեց նրան դասարանում չամիչով:  
Նա ալդպիսի բաները գեմոկրատիզմ էր համա-  
րում: Ասում էին, որ Սարգսեան գիտէ ալդ բո-  
լորը և ոչինչ չի անում, որովհետեւ կրօնի դա-  
սերի վրայ առանձին ուշագրութիւն չի ուզում  
դարձնել: Իրա փոխարէն մի օր մենք զարմանքով  
լսեցինք, որ մեր լարգելի ուսուցիչներից  
մէկը՝ Յակովը ծաղարբէկեան արձակուել է:  
Նա պաշտօն ստացաւ Մարիամեան օրիորդաց  
գպլոցում, ուր էր նաև Գարբիէլ վարժա-  
պետը, երեխ գարձեալ արձակուած, չեմ լիշում  
ում օրով: Մենք որքան սիրում էինք ծաղարբէկ-  
եանին, այդ խրոխա, սիրուն արտասանող, իմացա-  
ծը պարզ ու որոշ աւանդող սւսուցչին: Մեզ հետ  
անցել էր Հայոց պատմութիւն, ընդհանուր աշ-  
խարհագրութիւն, բանահիւսութեան տեսութիւն.  
վերջինս իւր կազմածն էր, որ լետոյ առանձին գըր-  
քով հրաարակեց:

Առօն Սարգսեան շատ աշխատեց գպլոցի  
վարկը բարձրացնել: Ամենից առաջ նա արտաքինի  
վրայ ուշագրութիւն դարձեց և ընդհանուր տա-

բազը պարտաւորեցուցիչ դարձրեց և տոկուն կերպով հետեւում էր սահմանուած կարգը՝ իրագործել տալու։ Քանի քանի աշակերտների տուն էր ուղարկում և 2—3 օրից լետոյ նրանք գալիս էին տարազով։ Ֆողովուրդն իմացաւ, որ իրենց ցանկացած անկամ մարդու հետ չեն գործ ունենալու։

Արտաքինի հետ զուգընթացաբար նա ուշագրութիւն էր դարձնում և ներքինի վրայ։ Գրադարանը կարգի բերուեցաւ և հարստացաւ (ժամանական պահարան), ֆիզիքական գործիքներ ստացուեցան և ալդպիսով ֆիզիքական կարինետի հիմք գրուեցաւ, (որ գժբախտաբար մինչեւ այժմ էլ նոյնն է մնացել, ոչ մի բան չի աւելացել, մնացածներնն էլ փչացել են)։ Նարադրութիւնները պարտաւորեցուցիչ դարձան, աշակերտներն սկսեցին հետաքրքրուել, կարգալ ու գըել։ Առաջին գրական առաւօտքը, որ եղաւ Խանդամիլինեանի թարսոնում, մի լազիտանակ էր Սարգսեանի ժամանակաւայ գլուխացի համար։ Երգում էր Ս. Գէմուրեանի կազմած քառաձայն խումբը։ Տարուայ վերջում բարձր դասարանցիներին լատուկ նիւթեր էին դրւում մշակելու, որոնք և կարգացւում էին լատուկ նիստերում և քննւում աշակերտների կողմից ուսուցչական խմբի ներկայութեամբ։ Ալս բոլորը բարձրացնում էր աշակերների ինքնազարգացման սգին։ Սկսել էին պարբերաբար լոյս տեսնել աշակերտական երկու շաբաթաթերթ «Լոյս» և «Բաղրոջ»։

Կամաց կամաց Սարգսեանը բողոքողի գեր էր լանձն առնում: Մեր դասարանը շենքի նեղուացքութեան պատճառով մի միջանցքի մէջ էր տեղուորուել (մի փոքրիկ սենեակ երկու դասարանների արանքում): Մի օր դասի ժամանակ նա ներս մտաւ սրբազնի հետ և ցոյց տալով դասարանը, ասաց խրոխտաբար.

— Ահա ձեզ՝ սա խօ դասարան չէ, այլ միջանցք է, որ մենք դասարան ենք դարձրել: Բայց և այնպէս մենք այդ միջանցքում էլ մնացինք մինչեւ որ աւարտեցինք: Մի գեղեցիկ օր էլ տեսանք, որ Առաջնորդարանի պարտէզի դռները բացուել են աշակերտների առաջ: Մինչեւ այդ սրբանք վանդակների արանքով էին միայն տեսնում, թէ ինչպէս Առաջնորդի ոչխարներն են այնտեղ գերանում, իսկ իրենք նեղ բակում ազատ խաղալ անգամ չեն կարող: Այժմ արդէն աշակերտներն էին ցատկուում և միւս տարին աշնանը նաև տանձ ու խնձոր անուշ անուշ:

Յաջորդ տարին յօրելեանների տարի էր: «Մշակը» տօնում էր իր քսանամեակը, իսկ «Նոր-Դարը»՝ տասնամեակը: Առաջինին թէ ուսուցիչներն էին հեռագրել և թէ աշակերտները, իսկ երկորդին մի խումբ աշակերտներ: Եւ ահա տեսուչը կանչում է այդ խմբին և բացատրութիւն պահանջում.

— Ձեզ ով թոյլ տուեց հեռագրել:

— Իսկ «Մշակին» ինչու հեռագրեցին.

— Բայց ալդ թերթը իր գրական խայտառակութեան յօրելեանն է տօնում, ի՞նչպէս կարելի էր. . .

Գիտակցաբար, դիտմամբ էին հեռագրել աշակերտները, թէ «Մշակի» օրինակով, յալտնի չէ, այսքանը միայն պարզ է, որ ալդ շարաբաստիկ հեռագիրը պատճառ եղաւ, թէ աշակերտներն և թէ ժողովուրդը բաժանվեցան երկու բանակի, մէկը եսլիսկոպոսի, միւսը տեսչի վլխաւորութեամբ։ Զեմ կարծում, որ երբ և իցէ որևէ է աշակերտի ցանկալի լինի ականատես կամ մասնակից լինել իւր Alma Mater-ում ալնապիսի տեսարանների, որ ալդ տարին և յաջորդ տարուայ աշնանը կատարուեցին Շուշու խեղճ թեմական դպրանոցում, երբ ես աւարտել էի և գնացել ձեմարան ականատես լինելու մի աւելի ու սոսկալի դպրոցական խլըրտման 1894 թ. աշնանը։

Ա. Գիտակցեցեան

Բալախանի, 5 փետրուարի 1913 թ.

